



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

703

# ՊԱՅՔԱՐ ԱԶ ՎՏԱՆԳԻ ՑԵՎ ՀԱՅՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

ԽՈՀՍ  
ՄՈՍԿՎԱ

ԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
1929



ՀԱՅ. Կ. Կ. (Բ) ՏՈՒՆՎԵՐԻ ԿՈՄԻՏԵԵՐԻ ԾԳԻՑԳՐՈԳ ԲԱԺԻՆ

ՊԱՅՔԱՐ ԱԶ ՎՏԱՆԳԻ ՑԵՎ  
ՀԱՅՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ



A 1  
8457



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ, 1929

Главлит А 13546.

Тираж 3000.

Типогр. при Управлении Делами СНК СССР и СТО М. Дмитровка 18.

Այն գեղքերը, վոր տեղի ունեցան Մոսկվայի կազմակերպության մեջ սեպտ.—հոկտեմբեր ամիսներին, խոշոր նշանակություն ունեն վոչ միայն Մոսկվայի կազմակերպության համար, այլև ամբողջ կուսակցության համար։ Այդ գեղքերը ամբողջ կուսակցության համար լավ դաս պիտի դառնան։ Բոլոր կազմակերպությունները քննադատաբար պետք է ուսուցեն իրենց գործնեյությունը, նկատի ունենալով այն, ինչ տեղի ունեցավ Մոսկվայի կազմակերպության մեջ,

«Աջ ոպորտունիստական վտանգի թերագնահատումը վերջին ժամանակներս յերեան հանվեց Մոսկվայի՝ կուսակցության առաջավոր կազմակերպության մեջ։ Անկասկած, կազմակերպության մի քանի ղեկավարները իրենց աշխատանքի ընթացքում վորոշ սխալներ թույլ տվին։ Հիմնական սխալներից մեկն այն է, վոր Մոսկվայի Վերահսկիչ Հանձնաժողովին Մոսկվայի կոմիտեյի սեպտեմբերյան պլենումը չմատնանշեց աջ վտանգը, վորը պետք է մերկացվի բանվորական դասակարգի առաջ։ Մոսկվայի Վերահսկիչ Հանձնաժողովի և Մ. Կոմիտեյի սեպտեմբերյան պլենումը չընդգծեց պայքարի անհրաժեշտությունը յերկու ֆրոնտի դեմ և չնիշեց՝ դեպի թեքումները հաշտվողաբար վերաբերվելու վտանգը։ Հենց դրանով ել սեպտեմբերյան պլենումը բավարար չափով չզինեց կազմակերպությունների

դեմ պայքար մղելու համար։ Այդ անվիճելի սխալները շարժեցին ամբողջ կազմակերպությունը։ Կուսակցական մասսաները դուրս յեկան ի պաշտպանություն կուսակցության ուղիղ գծի և ընդդեմ այն սխալների, վոր տեղի եցին ունեցել կազմակերպության ղեկավարության մեջ։ Ռայոնական ակտիվների և կազմակերպության անդամների յեկայնության պիտակցականության բարձր աստիճանը և անհերքելի կերպով վկայում կուսակցության իդեալիս աճման և ընդհանուր ամրապնդման մասին։ Հենց այն, վոր կազմակերպության անդամները և նրա ամենացածր որդանները հանդիսանում են բոյլշերիյան կոփվածություն՝ հնարավոր դարձավ կազմակերպության առանձին ղեկավարների արած սխալները, համեմատարար, հեշտությամբ ուղղել» («Правда», 20 օктябрյա)։

Կարճ ասած, այսպես և այն, ինչ տեղի ունեցավ Մոսկվայում։ Այստեղ զեր են խաղացել այն բարդ և գժվարին հանդամանքները, վորտեղ իրականացվում և կուսակցական ղեկավարությունը։ Այն հարցերը, վորոնք գրվել են Մոսկվայի կազմակերպության մեջ, գրանք բոլորն ել ընդհանուր կուսակցական հարցեր են։ Մոսկվայի կազմակերպության դասից ողափելով, այդ հարցերը ամբողջապես պետք ե գրվեն կուսակցության առաջ իրենց ամբողջ հասակով։

## I. ՅԵՐԿՈՒ ՖՐՈՆՏԻ ՎՐԱ

### 1. Վ.Ի. ԼԵՆԻՆԸ ԹԵՔՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կուսակցության մի քանի անդամները կարծում են թե թեքումները պատահական յերկույթ են: Հաճախ նրանք լավ չեն հասկանում, թե վոր տեղից են աջ և վոր տեղից ձախ թեքումները և թե ինչու պետք է պայքարել նրանց գեմ:

Ամենից առաջ պարզենք — աջ և ձախ թեքումները պատահական են թե՛ վոչ: Այդ հարցին ընկ. Լենինը բոլորովին ճիշտ պատասխան է տալիս:

«Յեվրոպայի և Ամերիկայի ժամանակակից քանվո-քական շարժման մեջ հիմնական տարտիկական տա-  
րածայնությունները հանդում են յերկու խոշոր ուղղու-  
թյանց պայքարին, վորոնք նահանջել են մարքսիզմից:  
այդ շարժման մեջ գերիշխող թեորիան փաստորեն դար-  
ձել և մարքսիզմը: Այդ յերկու ուղղությունները՝ ոե-  
վիզիոնիզմը (ոպորտյունիզմը, ոեֆորմիզմը) և անար-  
խիզմը (անարխո-սինդիկալիզմը, անարխո-սոցիալիզմը)  
են: Բանվորական շարժման մեջ գերիշխող մարքսիս-  
տական թեորիայից և մարքսիստական պրակտիկայից  
նահանջող այդ յերկու ուղղությունները, բոլոր քա-  
ղաքակրթված յերկրներում, բանվորական մասսա-  
յական շարժման համարյա կես դարի պատմության

ընթացքում հանդես կն դալիս տարբեր ձևերով և  
տարբեր գունավորումներով։ Այդ մի փաստից ար-  
դեն յերեսում ե, վոր այդ շեղումները չի կարելի բա-  
ցատրել վո՞չ պատճականություններով, վո՞չ առան-  
ձին անհատների կամ խմբակցությունների սխալներով,  
վո՞չ ել ազգային առանձնահատկությունների և տրադի-  
ցիաների ազգեցությամբ և այլն, Պետք է լինեն հիմնա-  
կան պատճառներ, վորոնք գտնվում են տնտեսական կա-  
ռուցվածքի յևկ բոլոր կապիտալիստական յերկրների զար-  
գացման բնույթի մեջ ու շարունակ ծնում են այդ ժե-  
ղումները\*): (Լենին, ՏՕՄ XI, չափ 2, ս�ր. 133):

Հետեւ բար մենք տեսնում ենք, աջ և ձաձ թեքումները—  
յերկուոն ել իրանց վոտքի տակ հոդ ունեն և խորը ար-  
մատներ։

Բնկ. Լենինը հատկապես կանգ և առնում  
Մեր վո՞ր թենա-  
այն հարցի վրա, թե բոյլեկիզմը բանվո-  
միների դեմ մղած  
բական շարժման դերում վո՞ր թշնամիների  
պայմանական զո-  
գեմ մղած իր պայքարում զորացավ, ամ-  
րացավ, ամրա-  
պնդվեց ու կոփ-  
րապնդվեց ու կոփվեց։

«Ամենից առաջ և դլխավորապես ոպոր-  
տունիզմի գեմ մղված պայքարում. այդ  
ոպորտունիզմը 1914 թվին վերածվեց՝ սոցիալ - շունչ-  
նիզմի, վերջնականապես՝ անցավ բուրժուազիայի կողմը՝  
ընդդեմ պրոլետարիատի։ Ոպորտունիզմը բանվորական  
շարժման ներսում, ընականաբար, բոյլեկիզմի ամենա-  
զլխավոր թշնամին երև Այդ թշնամին այժմ ել մնում ե  
վորպես դլխավոր թշնամի միջազգային մաշտաբով։  
Բոյլեկիզմը այդ թշնամուն ամենամեծ ուշադրություն  
և նվիրել և նվիրում ե»։

\* ) Կուրսիզը ամեն անդ խմբագրությանն եւ

Անսինը ինչի՞ մեջ եր տեսնում ոպորտունիզմի և յանր բուրժուական ռեֆորմիզմի արմատները:

Ժիշը համար դա կապիտալիստական հասարակության մեջ անխուսափելի յեւ ինչու համար դա ավելի խորն ե, քան ազգային առանձնահատկությունների և կապիտալիզմի զարգացման աստիճանների տարբերությունները: Վորովհետեւ յուրաքանչյուր կապիտալիստական յերկրում պրոլետարիատի կողքին միշտ կանգնած են մանր բուրժուազիայի և մանր տերերի լայն խավերը: Կապիտալիզմը ծնվել ե շարունակ ծնվում ե մանր արտադրությունից: Ցեզ այդ կապիտալիզմը անխուսափելիորեն նորից ստեղծում ե ռմիջին խավերի ամբողջ շարքեր...Այդ նոր մանր արդյունաբերողները, նույնպես անխուսափելիորեն շպրտվում են կրկին պրոլետարիատի շարքերը: Միանգամայն բնական ե, վոր լայն բանվորական կուսակցությունների շարքերում նորից և նորից սողոսկվում ե մանր բուրժուազիայի աշխարհայացքը: Միանգամայն բնական ե, վոր այդպես ել պիտի լինի դա կլինի միշտ՝ մինչեվ պրոլետարական նեղափոխուրյան պերիպետիան, վորովհետեւ մեծ սխալ կլիներ կարծել, թե այդպիսի հեղափոխություն անելու համար անհրաժեշտ ե ազգաբնակչության մեծամասնության «կատարյալ» պրոլետարիզմացիան: Այն, ինչ վոր վերապրում ենք մենք այժմ, հաճախ միայն գաղափարական վերապրումն ե.—Մարքսի գրվածքների վերաբերյալ վեճեր՝ թերեւիկ ուղղումներով, այսինքն՝ այն, ինչ վոր այժմ գործնականում բանվորական շարժման առանձին մասնավոր հարցերի շուրջը ներս ե սողոսկում, վորակես մեր տաքտիկական տարածայնությունները ռեվիզիոնիստների հետ և այդ հողի վրա մեր պառակտումը նրանցից. բանվոր դասակարգը այդ բոլորը անպայման նորից

պես և վերապրի յեվ անհամեմատաբար ավելի խուռաց չափերով, յերբ պրոլետարական նեղափոխությունը կարև բռնոր վիճելի հարցերը, կկենտրոնացնի բոլոր տարածայնությունները այն պունկտերի շուրջը, վորոնք մասսաների վարքագիծը վորոշելու համար ամենաանմիջական նշանակություն ունին. այդ տարածայնությունները տաքացած պայքարի ժամանակ կանչառան թշնամիներին բարեկամմաներից, կոտիպեն դեն շպրտել վատ դաշնակիցներին՝ թշնամուն վճռական հարված տալու համար» (Լենին, «Марксизм и ревизионизм», т. XI ч. 1, стр. 60—61):

Դրանից անմիջապես հետո, Լենինը մատնաշնում և մի այլ թշնամու վրա, վորի դեմ պայքարել և պայքարում և բոլցշեիզմը: Լենինը դրում և—

«...Բոյլէնվիզմը անեց, կազմակերպվեց յեվ կոփվեց մանր բուրժուական նեղափոխականության դեմ տարած իր յերկարամյա պայքարի մեջ. մանր բուրժուական այդ հեղափոխականությունը հակվելով դեպի անարիստիզմ, յուրացնում նրանից մի վորոշ բան, վորը եյտապես մի նահանջ և պրոլետարական ուղիղ գասակարդացին կովկա պահանջներից և պայմաններից: Բոլոր յեվրոպական հեղափոխությունների և հեղափոխական շարժումների փորձը հաստատել և և թեորիապես բոլոր մարքսիստները հաստատապես դիտեն, վոր մանր սեփականատերերը, մանր խազյայչիկը (սոցիալական տիպ և և յեվրոպական շատ յերկրներում լայն մասսայական ներկայացուցչություն ունի) կապիտալիզմի շրջանում մըշտական զրկանքներ կրելով և շատ հաճախ կյանքի պայմանների ամենախիտ և արագ վատթարացման և քայքայման յենթարկելով—դառնում և ծայրահեղ հեղափոխական, բայց նա անընդունակ և հանդես բե-

բել տոկունություն, կազմակերպչական ձիրք, դիսցիպ-  
լինա: Կապիտալիզմի սարսափից «կատաղած» մանր  
բուրժուան սոցիալական յերեւյթ ե, վորը հատուկի, ինչ-  
պես և անարխիզմը, բոլոր կապիտալիստական յերկրնե-  
րին: Այսպիսի հեղափոխականության խախուտությունը,  
անպտուղ լինելը, նրա շուտ խոնարհվելու, ապատիայի  
մեջ ընկնելու, ֆանտաստիկայի վերածվելու հատկու-  
թյունը, նրա «կատաղաբար» տարվելը բուրժուական  
այս կամ այն «նորածե» ուսմունքով՝ հանրածանոթ  
բան եւ Բայց ընդունել այդ ճշմարտությունները բա-  
ցարձակ կերպով, թեորիապես, այդ յերբեք դեռ չի  
ազատում հեղափոխական կուսակցությունները իրենց  
հին սխալներից, վորոնք միշտ հանդես են գալիս մի  
քիչ նոր ձևերով, անսպասելի առիթով, մինչ այդ չտես-  
նըլած հանդերձավորման կամ շրջապատի մեջ, որիդի-  
նել պայմաններում» (Լենին.—«Դետская болезнь “ле-  
виэны”, в коммунизме», стр. 18—19. см. также собр.  
соч. т. XVII, стр. 124—125).

Այդ տողերով ընկ. Լենինը արտահայտել ե այն բոլորո-  
վին պարզ միտքը, թե բոյլշեիզմը պայքարելով յերկու Ֆրոնտի  
վրա՝ աջ և ձախ, բանվոր դասակարգի վրա ունեցած բուր-  
ժուական ազդեցության դեմ—տիրում ե բանվոր դասակար-  
գին՝ իր կողմը դրավելով նրան: Դա բուրժուազիայի դեմ  
մղած կովի ամենահիմնական խնդիրներից մեկն ե:

Աջ և ձախ թեքունների դեմ մղած այդ  
Դժվարություննե- կոփվը առանձնապես կարեոր բնույթ ե  
ները հեղափոխա- ստանում ընկուների ժամանակ, բանվոր  
կան շարժման մեջ յել թերում- դասակարգի փորձության մոմենտներին,  
ները.

կամ այն ժամանակ, յերբ բանվոր դասա-  
կարգը պետք է արձակման դիմի և կամ պետք  
է նահանջի: Այդ մոմենտներին ամեն անգամ սկսում ե ուժեղ

կերպով տատանվել մանր բուրժուազիան։ Ի հարկե, նրա այդ տատանումները տարրեր հանդամանքներում, մոմենակ առանձնահատկության և գասակարգային ուժերի տվյալ հարաբերության համաձայն, տարրեր ձեւեր են ընդունում։

Ընկ. Լենինը այդ միաբը ընդդժում և «Նոր ժամանակներ, հին սխալները նոր ձեւերով» հողվածում՝

«Պատմության ամեն մի առանձնահատուկ շրջադարձը մանր բուրժուական տատանումների մեջ առաջացնում է վորոշ փոփոխություններ, վորոնք միշտ տեղ են գտնում պրոլետարիատի կողքին և այս կամ այն չափով միշտ թափանցում են պրոլետարիատի շրջապատի մեջ։

Մանր բուրժուական սեփորմիզմը ծածկվում է բարի գեմոկրատական և «սոցիալ» գեմոկրատական ֆուազարանությամբ և բուրժուազիայի առաջ իր պնակալեղության անզոր ցանկություններով։ Մանր բուրժուական հեղափոխականությունը խոսքով սպառնալից և, փքուն, իսկ գործով դատարկ և, ցաք ու ցրիվ, անպլուստ Այդպես են այդ տատանումների յերկու «հոսանքը»։ Մինչև վոր չեն վերացվել կապիտալիզմի ամենախոշոր արմատները, այդ յերկու հոսանքները անխուսափելի յեն։ Այժմ, սովետական իշխանության տընտեսական քաղաքականության հայտնի շրջադարձության հետևանքով, փոփոխվում են և այդ թեքումների ձեւերը» (Լենին, ՏՕՄ XVIII, գ. 1, ստր. 352—353)։

Դա շատ կարեոր ցուցմունք է։ Դա մեզ ասում է, վոր բավական չե կրկնել թե՝ աջ և ձախ թեքումները կուսակցության մեջ յեղել են, կան և կլինչեն՝ մինչև վոր մանր բուրժուազիան չչքանա։ Վորպեսզի կարողանանք ըմբռնել այն ձեւը, վոր ընդունում են այդ թեքումները, և այն առաջարկությունները, վոր անում են նրանք,—պետք է միշտ ամեն-

նառաջադեր կերպով քննել մոմենտի առանձնահատուկ կողմերը և դասակարգային ուժերի ու պայմանների այն համադրությունը, վորը վորոշում և գունավորում են ներկարեկման մոմենտը:

Այստեղ կարեոր ենիշել մի հարց ևս: Աջ և ձախ թեքումները միշտ միաժամանակ են հանդես դալիս, վորովհետեւ կապիտալիզմը այդ յերկու թեքումներն են ծնում են միաժամանակ:

Սակայն այդ թեքումները հավասարապես մշասակար են բանվոր դասակարգի համար և հավասարապես անընդունելի, բայց միշտ չեն, վոր հավասարապես են մշասակար:

Այդ պատճառով ել կոմունիստական կուսակցությունը պայքարելով յերկու ֆրոնտի վրա, միշտ պայքարելով այդ յերկու թեքումների դեմ, պետք է կարողանա տարբերել և նախատեսել, թե ներկա պատմական պայմաններում, ներկա յուրահատուկ բեկման մոմենտում այդ թեքումներից վո՞րն ե վտանգավոր դառնում: Այդ բանի համար կոմունիստական կուսակցությունից պահանջվում ե ամենազգույշ անալիզի յենթարկել գոյություն ունեցող պայմանները և այդ պայմաններին համապատասխան դասակարգային ուժերի հարաբերությունները:

Սովորաբար (թեև վոչ միշտ) այնպես ել լինում, վոր աջ թեքումը առանձնապես վտանգավոր և դառնում այն ժամանակ, յերբ բանվոր դասակարգը հարձակման և պատրաստվում և յերբ աջ ոպորտունիստական տարբերը խանգարում են նրա յելույթին: Սովորաբար (թեև վոչ միշտ) ձախ թեքումը առանձնապես վտանգավոր և դառնում այն ժամանակ, յերբ բանվոր դասակարգը ստիպված ե նահանջել և այդ նահանջի ժամանակ նրա առաջ խնդիր և գրված՝ պահպանել իր շարքերը դասակարգային ուժերի հաջող հարաբերության մոմենտի յելույթի համար: Այդպիսի մոմենտին

ե, վոր հեղափոխական ավանտյուրայի ձախ տարրերը բանվոր դասակարգին մղում են զեղի հուսահատության յելույթ, վորը միայն ընդունակ և քայքայել շարքերը և բուրժուազիայի ձեւը ռասպրավայի առիթ տալ Այսպիս, որինակ, յերբ Իտալիայում 1920 թվին մոտենում էր հեղափոխությունը, Լենինը իր ամբողջ վճռականությամբ հարձակվեց աջերի վրա, մատնանշելով, վոր կուսակցության համար անհրաժեշտ խնդիր և, հեղափոխական յելույթի մոմենտին, մաքրել կուսակցությունը տատանվող տարրերից:

Սակայն, յերբ հեղափոխությունը պարտություն կրեց Իտալիայում (իսկ աջերը դուրս եյին արված և անվտանգ դարձված) — Լենինը դուրս յեկավ «Ճախ» թերման դեմ, —

«Մենք վո՞չ միայն զատապարտեցինք ցենտրիստներին, այլև նրանց դուրս քշեցինք կուսակցությունից: Այժմ մենք պետք եւ զառնանք մյուս կողմի վեմ, վորը նույնակես վտանգավոր ենք համարում (Լենին, ՏՕՄ XVIII, часть 1, стр. 310):

Վորաբեսի վերջնականապես պարզենք Պայքար յերկու թրոնի վրա յեկ հաւաքվականությունը, թե բոյլեիկները ինչպես եյին տանը, թե բոյլեիկները, վորաբես որինակ վերցնենք բոյլեիկմի պայքարը ոեակցիայի տարիներին, լիկվիդատորության և ոտզովիստների դեմ (1908—1911 թ.): Պայմանները վորոշվում եյին նրանով, վոր հեղափոխությունը պարտվել եր և նրա տեղ թագավորում եր ոեակցիան: Զախ ինտելիգենցիայի, մանը բուրժուազիայի և բանվոր դասակարգի նվազ տոկուն խավերում յերեան յեկավ մի կողմից՝ ապատիս, պայքարից յետ կանգնելու ցանկություն և հաղթանակող հակահեղափության հետ հաշտվելու ձգտում: Մյուս կողմից՝ հուսահատություն, իրականության հետ չհաշտվելու ցանկություն, այսինքն՝ չեյին ընդունում

վոր անհրաժեշտ և նահանջել և մասսաները պատրաստել նոր պայքարի համար, ողտագործելով բոլոր միջոցները և հնարավորությունները:

Առաջին տրամադրությունը՝ լիկվիդատորական հոսանքն եր մենչեփիների մեջ, ուր լիկվիդատորները մեծամասնություն եյին կազմում: Լիկվիդատորության եյությունը հանգեց այն բանին, վոր առաջարկություն արեց հրաժարվել «հեղափոխական դասակարգային պայքարից» և ցրել անլեզակ կազմակերպությունները: Բայց դա աջ կապիտուլիացիա (հանձնումն) եր՝ հականեղափոխության վողորմածության հանդեպ:

Յերկրորդ տրամադրությունը—ոտզովիստական հոսանքն եր բոյլշիփիների մեջ: Ոտզովիստները դեմ եյին պետական դումայում մասնակցելուն, կողմնակից եյին պետական դումայի գեղուտատներին յետ կանչելուն, վորովհետև դուման հետադիմական եր: Յեթե կուսակցությունը հետևեր այդ առաջարկության և հրաժարվեր դումայի տրիբունան ոգտագործել և լայն բանվորական մասսաների հետ խոսել դումայի գլխի վրայով,—կուսակցությունը անպայման կըմեն՝ կուսանար բանվորական մասսաներից: Ոտզովիզմը, ինչպես կենինն ե գրում, հանգում ե սինդիկալիզմի, անարխիզմի, և լիկվիդատորություն ե՝ աստառի կողմից:

Դա ձախ ժեստ ե, ձախ ֆռազ, վորը գործնականապես զինաթափ ե անում բանվոր դասակարգին:

«Յերկու ֆըռնտի վրա» լոգունգը կենինը առանձնապես ճիշտ ձեակերպեց 1910 թվի Ռ. Ս. Դ. Բ. (բ) կ.—թյան կենտ. կոմիտեյի հունվարյան պլենումում: Նա դրա մասին գրում ե իր «Заметки публициста» հոդվածում, վորի մեջ նա դրան նվիրել ե հատուկ գլուխ՝ «պայքար յերկու ֆըռնտի վրա և թերումների հաղթահարումը»:

«Այդ բանաձեի նախազիծը կենտկոմ մտցրի յես և ներկա կետը կոմիսիայի աշխատանքներից հետո փո-

փոխեց պլենումը Տրոցկու առաջարկությամբ, վորի դեմ  
յես անհաջող պայքար ունեցաւ: Այդ կետում յես առա-  
ջարկում եյի յեթե վոչ բառացի «պայման յեկա այնպիսի բառեր, վորոնք  
այդ միտքն եյին արտահայտում» «Հաղթահարումը խո-  
րացման և լայնացման ճանապարհով» խոսքերը մտց-  
գած են Տրոցկու առաջարկությամբ...

Պիենումին վո՛չ մի բան այնպես չեր գրգռում յեկ  
բուռն՝ հանախ կոմիտական՝ հուզմունքներ հարուցում,  
փոքան «պայման յեկա այնպիսի վրա» միտքը: Այդ մա-  
սին անգամ հիշեցնելը համբերությունից հանաւմ եր մեն-  
սեվիկներին յեկ վայերյոդովցիներին: Այդ հուզմունքը  
պատմականորեն ամբողջապես բացատրելի յե, վորով-  
հետեւ բոյլեիկները իրականապես այդ պայքարը յեր-  
կու ֆրոնտի վրա՝ այսինքն լիկվիդատորների և ուղո-  
վիստների դեմ պայքարը, տարան 1908 թվի ոգոստո-  
սից մինչև 1910 թվի հունվար ամիսը: Այդ հուզմունքը  
կոմիքական եր հենց նրա համար, վոր բոյլեիկների  
վրա բարկացողները դրանով ապացուցում եյին իրենց  
մեղավորությունը, ապացուցում եյին, վոր լիկվիդատո-  
րության և ուղովիզմի ամեն գատապարտումը շարու-  
նակում եր հուզել նրանց: Գողին միշտ թվում ե թե  
իր գլխարկը վառվում ե գլխին»: (Լենին. Դ. XI, 2,  
стր. 55, § 2):

Զիսոսելով պայքարը «յերկու ֆրոնտի վրա» տանելու լո-  
գունքի չափազանց պարզ Փորմուլիրովկայի մասին, այստեղ  
առանձնապես հետաքրքիր ե և ուղղակի ժամանակակից և  
Լենինի առաջազրությունը հաշտվողականության (պրիմի-  
րենչտե) մասին: Ինչպես տեսնում ենք, բոյլեիզմի գլխա-  
վոր դժիգ դուրս թեքումների (զեպի վոր կողմն ել վոր լի-  
նեն նրանք) վերաբերյալ հաշտվողականությանը Լենինը

վերաբերվում եր անհաշտ: Նա մերկացնում և Տրոցկու այն ժամանակվա հաշտվողական դիրքը: Տրոցկին թեքումների դիմ պայքարը համարում եր ավելորդ, անհատների և խըմ-քակցությունների մսասակար պայքար, և առաջարկում եր վերացնել սկզբունքային տրամադայնությունները՝ բոյլշեիզմը այդ թեքումների հետ հաշտեցնելով «աշխատանքի լայնաց-ման և խորացման» ճանապարհով: Այդ բանը չափազանց հիշեցնում և այն անսկզբունքային տրամադրությունը, վորը աեղի ունի Մոսկվայում և վորը մոտավորապես այս-պես և արտահայտվում՝ «Հարկավոր չե աջ թեքման մասին խոսել, աշխատեցեք քիչ խոսել և շատ աշխատել»: Մկզբուն-քային հարցի և ուղիղ քաղաքական գծի պայքարի դեմ ուղ-դաձ՝ Տրոցկու «աշխատանքի խորացման և լայնացման» առա-ջարկություններին Լենինը պատասխանել ե դեռ 1910 թվին:

«...ինչպես կարելի յե հաղթահարել թեքումները սոցիալ-դեմոկրատական աշխատանքի լայնացման և խորացման ճամբով: Ամեն մի լայնացման յեվ ամեն մի խորացման միջոցին անխուսափելիորեն հարց կառաջա-նա՝ ինչպես լայնացնել յեվ ինչպես խորացնել. յեթե լիկ-վիդատորությունը և ոտզովիզմը պատահական յերեւյթ չեն, այլ ծնվել են սոցիալական պայմանների ընթաց-քով, նշանակում ե նրանք կարող են ներխուժել աշ-խատանքի ամեն լայնացման և խորացման մեջ: Կա-րելի յե աշխատանքը լայնացնել և խորացնել լիկվիդա-տորության վորով...կարելի յե այդ նույնն անել և ոտզովիզմի վորով: Մյուս կողմից՝ թեքումների հաղրա-հարումը՝ «հաղրահարում» խոսի իսկական մտքով՝ խում ե անմիջական լայնացման յեվ խորացման նիւթ սոցիալ-դեմոկրատական աշխատանքից ուժեր, ժամանակ յեվ եներգիա:

... Այսպիսի «հառաջանքի» քաղաքական նշանակու-թյունը դերո յե, զրոյից ել վատ: Ցեթե կուսակցության

մեջ կան մարդիկ, վորոնց շահավետ և «համառությամբ բացասել» լիկվիդատորների (և ուզովիսատների) գոյությունը, պարզ ե, վոր նրանք կողտազործեն «հաշտարարների» «հառաջանքը»՝ չարիքը ծածկելու համար: Այդպիսս ել վարդում և «ԳՈԼԾ Ը. Ճ.»: Այդ պատճառով բանաձեւերի մեջ նման բարենպատակ դատարկ ֆուազներ պաշտպանողները միայն այսպիս կոչված (ընդդժումը Լենինին և) «հաշտարարներն» էն: Իրականում նրանք լիկվիդատորների յեկ ոսգովիսաների աջակիցներն են, իրականում նրանք խորացնում են վոչ քե սոցիալ-դեմոկրատական աշխատանքը, այլ ամրացնում են քեմումները սոցիալ-դեմոկրատիալից, ժամանակավորապիս բազցնելով շարիք՝ ամրապնդում են նրան յեկ դժվարացնում նրանից բուժվելու գործը»: (Լենին, Դ. XI, Կ. 2, ՇՏ. 55):]

Խոկապես վոր, դեպի թեքումներն ունեցած հաշտվողական վերաբերմունքի մասին սպանիչ բնույթագիր և սա:

## 2. ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՀԻՄՓԲ ՄԱՆՐ ԲՈՒՐ- ԺՈՒԱԿԱՆ ՏՈՐԵՐԻՆ Ե

Վորպեսզի մենք կարողանանք հասկանալ, թե ինչ արմատներ կան թեքումների համար պրոլետարիատի դիկտատուրայի, պայմաններում և այդ թեքումները ինչ նշանակություն ունեն, ինչ դեր են կատարում, —պետք ե տեսնենք, թե ինչպիսի փոխհարաբերություն գոյություն ունեն մեր յերկրում սոցիալիզմի (կոմունիզմի)և կապիտալիզմի միջև:

Մեր յերկրում կատարվում է չափազանց լարված պայքար կոմունիզմի ու կապիտալիզմի միջև, վորովհետև մեր հասարակությունը անցողիկ հասարակություն ե, նա կապիտալիզմից անցնում և դեպի կոմունիզմ: Ընկ. Լենինը

«Եկոնոմիկան և քաղաքականությունը պրոլետարիատի դիկտատուրայի հաղոխայում» իր հոդվածում գրել ե.

A 8457  
«Անցողիկ այդ շրջանը չի կարող չլինել պայքարի շրջան մեռնող կապիտալիզմի և ծնվող կոմունիզմի միջև կամ, ուրիշ խոսքով, հաղթված, բայց տակավին չվոչնչացված կապիտալիզմի ու ծնված, բայց դեռ չափազանց թույլ կոմունիզմի միջև»:

Այն մտքի վրա, թե կապիտալիզմը մելենինը կապիտա-  
լիզմի վերականգ-  
նանում հաղթված ե, բայց չի վոչնչացված,  
մասնինարավորու-  
թյան մասին. շարք աշխատություններում նա վերադառ-  
նում եր այն մտքին, թե՝

«Գյուղացիական տնտեսությունը շարունակում է  
մնալ մանր ապրանքային արտադրություն։ Այստեղ  
մենք ունենք կապիտալիզմի չափազանց լայն և շատ  
խորուն, շատ մնայուն արմատներ ունեցող բազա։ Այդ  
բազայի վրա կապիտալիզմը պահպանվում և վերածն-  
վում ե նորից—կոմունիզմի դեմ մղվող ամենակա-  
տաղի պայքարում» (Լենին, Տ. XVI, ստ. 349):

1617  
Կապիտալիզմի վտանգը մեր պայմաններում կայանում ե  
նրանում, վոր մանր գյուղացիական տնտեսությունը հետզ-  
հետեւ և անխուսափելիորեն առաջ ե բերում կապիտալիզմ։  
Յեկանի դեռ գոյություն ունի մանր գյուղացիական տըն-  
տեսությունը, այնքան ժամանակ ել պահպանվում են նաև  
կապիտալիզմի վերականգման (ռեստավրացիայի) արմատ-  
ները։ Բնկ. Լենինը շեշտում եր այդ միտքը.

«Վերցրեք տնտեսական ֆրոնտը և հարցրեք. տըն-  
տեսական տեսակետից կարո՞ղ ե արդյոք կապիտա-  
լիզմը վերադառնալ Ռուսաստան։ Մենք կովում եյինք  
Սուխարեկայի դեմ։ Նորերս, խորհուրդների Համառու-  
սական համագումարի բացման որերին, բանվորների

ու կարմիր բանակայինների պատգամավորների Մոսկ-  
վայի խորհուրդը փակեց այդ՝ վո՞չ այնքան հաճելի  
հիմնարկը։ Սուխարեկան փակված եւ սակայն սար-  
սափելի չեր այն Սուխարեկան, վոր փակված եւ Փակ-  
ված են նախկին Սուխարեկան Սուխարեյան հրապարա-  
կում, դժվար չեր այն փակելը։ Սարսապելի յե այն Սու-  
խարեկան, վորն ապրում ե յուրաքանչյուր մանր սե-  
փականատիրոջ հոգու և գործողությունների մեջ, Պետք  
ե փակել ա՛յդ Սուխարեկան։ Այդ Սուխարեկան կապի-  
տալիզմի հիմքն եւ Քանի այդ հիմքը կա, կապիտա-  
լիտաները կարող են վերադառնալ Ռուսաստան և կա-  
րող են ավելի ուժեղ դառնալ քանի քան մենք։ Այդ բանը  
պետք ե պարզ գիտակցել։ Դա պետք ե գլխավոր խթան  
դառնա մեր աշխատանքներում և լինի մեր իրական  
հաջողությունների պայմանն ու չափը։

Այնուհետև Լենինը ամբողջ թափով շեշտում ե.

«Քանի դեռ մենք ապրում ենք մանր զյուղացիական  
յերկրում, կապիտալիզմի համար Ռուսաստանում կա ավելի  
կայուն ևնեխական բազա, քան կոմունիզմի համար։  
Անհրաժեշտ ե չմոռանալ այդ բանը։ Յուրաքանչյուր  
վոր, վորն ուշադրությամբ դիտել ե գյուղի կյանքը,  
համեմատելով դա քաղաքի կյանքի հետ,—գիտե, վոր  
մենք արմատախիլ չարինը կապիտալիզմը, չքանդե-  
ցինք ներքին թշնամու հիմքը։ Վերջինս հենված  
մասում ե մանր տնտեսության վրա, և վորպեսզի  
հնարավոր լինի կործանել այն, կա միայն մի մի-  
ջոց—յերկրի տնտեսությունը, այդ թվում նաև յերկ-  
րագործությունը, փոխել և դնել տեխնիկական նոր  
բազայի, ժամանակակից խոշոր արտադրության տեխնի-  
կական բազայի վրա։ Այդպիսի բազա յե միայն ելեք-  
տրականությունը։

«Կոմունիզմը — խորհրդային իշխանությունն ե  
պլյուս ամբողջ յերկրի ելեքտրիֆիկացիան։ Հակառակ  
դեպքում, յերկրը մնում է մանր գյուղացիական, և  
պետք է վոր մենք այդ բանը պարզ գիտակցենք։ Մենք  
կապիտալիզմից ավելի թույլ ենք վո՞չ միայն համաշ-  
խարհային մասշտաբով, այլև մեր յերկրի ներսում։ Դա  
հայտնի յե ամենքին։ Մենք այդ գիտակցել ենք, և մենք  
գործը կհասցնենք մինչ այն, վորակեսղի տնտեսական  
բազան մանր գյուղացիականից փոխվի խոշոր արդյուն-  
արերականի։ Միայն այն ժամանակ, յերբ յերկրը  
ելեքտրիֆիկացիայի կենթարկվի, յերբ արդյունարե-  
րությունը, գյուղատնտեսությունն ու տրանսպորտը  
կդրվեն ժամանակակից խոշոր արդյունարերության  
տեխնիկական բազայի վրա, — այն ժամանակ միայն  
մենք կհաղթանակենք վերջնականապես» (Լենին, Տ. XVII,  
стր. 427—28):

Պրոլետարիա տիտիկտատուրայի անցողիկ եպոխան — կոմ-  
մունիզմի համար պրոլետարիատի մղած պայքարի եպոխան  
իւ Սակայն, հիմնականում ինչու՞մ ե կայանում այդ պայ-  
քարը։ Ինչպես ասել և Լենինը, այդ պայքարը կայանում ե  
վո՞չ միայն կապիտալիզմի մեջ յեղած տարրերը քաղաքական  
ու տնտեսական միջոցներով ուղղակի ճնշելուն, այլ նրա-  
նում, վոր պետք ե «հասարակական ամբողջ տնտեսությունը  
կազմակերպչուն վերակառուցել», պետք ե

«անհատական, առանձնացած, ապրանքային մանր  
տնտեսությունից անցնել հասարակական խոշոր տըն-  
տեսության» (Լենին, Տ. XVI, стր. 352):

Լենինի այդ ցուցմունքներով վորոշվում ե և պիտի վո-  
րոշվի կուսակցության գլխավոր գիծը։ Այդ տեսակետից հենց  
պետք ե մոտենալ մեր շինարարության հիմնական դժվարու-  
թյունների գնահատականին, դժվարությունները հաղթահա-

բելու այն ուղիների գնահատականին, վոր առաջարկվում էն կուսակցությանը աջից և «ձախից»:

«Ով—ում?»      Մեր յերկրում կապիտալիզմի վերականդանինի այս հայեցակետի հետ, դյուզացիության մանր տնտեսության դերի մասին նրա դրած հարցի հետ և կապված էնինյան հարցը՝ «Ով—ում?»:

«Կամ մենք կենթարկենք մեր վերահսկությանն ու հաշվառքին այդ մանր բուրժույթին (մենք կարող ենք այդ անել, յեթե գիտակից պրոլետարական ավանդարդի շուրջը կազմակերպինք չքավորությունը, այսինքն՝ աղդաբնակչության մեծամասնությունը, կամ կիսապրոլետարներին), կամ նա անխուսափելիորեն իրենից կթոթափի մեր բանվորական իշխանությունը, ինչպես թոթափում եյին հեղափոխությունը Նապոլեոն-ները և Կավենյակները, վորոնք զորանում են հենց այդ —մանր սեփականատիրական—հողի վրա։ Այդպես ե դրված հարցը։ Միայն այդպես և դրված հարցը (Լենին, Դ. XV, ստ. 265):

«Ով—ում?» լենինյան այդ հարցը մեզանում հաճախ բացարում են, կիրառելով դա կապիտալիստական տարրերի նկատմամբ, այն բանի նկատմամբ, թե քանի տոկոսով և ընկել կապիտալիստի, մասնավոր տոկորականի և կուլակի դերը ժողովրդական տնտեսության մեջ։

Դա սխալ եւ

Այդ առթիվ արժե հիշել Իլիչի ճառը, արտասանած կոմինտերնի լլլ կոնգրեսում՝ ՌԿԿ տակտիկայի մասին։ Նրա այդ ճառում կա հատուկ մի հատված՝ «Փոխհարաբերությունները պրոլետարիատի ու դյուզացիության միջև»։ Այդ հատվածում էնինն ամենից առաջ կանգ և առնում պրոլետարիատի և դյուզացիության փոխհարաբերությունների

վրա, վորպես մանը ապրանքարտադրողների ու մանը յերկրագործների դասակարգի դեմ պրոլետարիատի մղած պայմանի փոխարաբերությունների վրա:

«Բացի... շահագործողների դասակարգից, համարյա բոլոր կապիտալիստական յերկրներում, գուցե բացառությամբ Անգլիայի, գոյություն ունի մանը ապրանքարտադրողների և մանը յերկրագործների դասակարգ։ Այժմ նեղափոխուրյան գլխավոր խնդիրը հանդիսանում է այդ յերկու դասակարգի դեմ (այսինքն՝ մանը ապրանքարտադրողների դասակարգի և մանը յերկրագործների դասակարգի—Խմբագր.) մղվող պայքարը։ Դրանից ազատվելու համար անհրաժեշտ է կիրառել ուրիշ մեթոդներ, քան այն մեթոդները, վոր կիրառվում են խոշոր կալվածատերերի և կապիտալիստների դեմ» (Լենին, Դ. XVIII, Կ. I, ստ. 365):

Լենինի այս մտքերի հետ անբաժնելիո-

Պրոլետարիատի ըեն կազմած և նրա ուսմունքը պրոլետալիկտատուրան յեկ ըիատի դիկտատուրայի մասին։ և չհաս- բանվոր դասա- կանալ Լենինի հայացքը պրոլետարիատի կարգի ու գյուղա- ու գյուղացիության փոխարաբերություն- ցիուրյան միու- թյունը։ ների վերաբերմամբ, նշանակում ե՝ չհաս-

կանալ նրա ուսմունքը պրոլետարիատի դիկտատուրայի մասին։ Վորովինետե պրոլետարիատի դիկտա- տուրն հանդիսանում ե, մի կողմից — այդ պայքարի ձեզ բուրժուազիայի դեմ, մյուս կողմից — մանը բուրժուական տարերքի դեմ, մանը բուրժուական եկոնոմիկայի դեմ։

Սակայն, հսկայական տարբերություն կա բուրժուազիայի ու մանը բուրժուազիայի միջև։ Լենինը հաշվի յեր առնում այդ տարբերությունը և բաժանում եր մանը բուրժուազիայի դասակարգը, մանը յերկրագործների դասակարգը կապիտալիստների դասակարգից (մի քան, վոր Տրոցկին

յերբեք չեր հասկանում): Գյուղացիության մասին նա ասում ե.

«Գյուղացիներն առանձին դաստիարդ են: Վորպես աշխատավորներ, նրանք թշնամիյն կապիտալիստական շահագործմանը, բայց միևնույն ժամանակ նրանք սեփականատերեր ենր Դարերով գյուղացին դաստիարակվել ե այնպես, վոր հացը իրենն ե և վոր ինքն ազատ ե՝ գաճառելու այն: Դա իմ իրավունքն ե, մտածում ե գյուղացին, վորովհետեւ դա իմ աշխատանքն ե, իմ քըրտինքն ու արյունն ե: Զի կարելի արագությամբ փոխել նրա հոգեբանությունը,—դա պայմարի լերկար ու դժվար պրոցես ե: Ով յերեակայում ե, թե սոցիալիզմին անցնելը կլինի այնպես, վոր մեկը կհամոզի մյուսին, յերկրորդը յերրորդին, նա, լավագույն դեպքում, յերեխա յե, կամ քաղաքական կեղծավոր...» (Լենին, թ. XVI, ստբ. 215—216):

Մանր բուրժուական տարերքի դեմ պայքարը իրեն նպատակ ե զրել — մանր բուրժուական տարերքը յենթարկել պրոլետարիատի ղեկավարությանը՝ հանուն ընդհանուր պայքարի՝ կապիտալիստներին ճնշելու համար, հանուն սոցիալիզմի շինարարության:

Ե՛լ ավելի վորոշակի այդ միտքը,—թե պայքարը մանր բուրժուազիայի դեմ, պրոլետարիատի դրկտատուրան մանր բուրժուազիայի վերաբերմամբ պետք ե ունենա միության ձեւ ու պետք ե անցկացվի գյուղացիության հիմնական մասսայի հետ կապած դաշինքի հիման վրա,—Լենինը շեշտում է Կոմինտերնի III կոնգրեսում արտասանած իր ճառի նույն այն հատվածում, վորտեղ նա վորոշում ե հաղթական պրոլետարիատի ու գյուղացիության փոխհարաբերությունները, վորպես պայքարի հարաբերություններ:

Նա ասում ե.

«Հեղափոխության զարգացման մեջ գործնականապես ի՞նչպես և արտահայտվում իշխանությունն իր ձեռքն առած պրոլուտարիատի վերաբերմունքը դեպի դյուղացիությունը։ Առաջին ձևը—միուրյունն ե, սերտ միուրյունը։ Դա չափազանց դժվար խնդիր ե, բայց համենայն դեպս, տնտեսապես ու քաղաքականապես հնարավոր» (Լենին, Տ. XVIII, Վ. I, ՇՏԲ. 326):

Սակայն, հակասություն չկա<sup>9</sup> արդյոք սկզբում արած ալնդումի—թե «հեղափոխության վերաբերյալ գլխավոր հարցն այժմ հանդիսանում ե այդ յերկու դասակարգի դեմ պայմանը—և հետո արած պնդումի միջև, թե պրոլետարիատի ու դյուղացիության հարաբերությունները պետք ե կազմվին սերտ միուրյան հիման վրա։ Այստեղ վո՛չ մի հակասություն չկա, յեթե միայն յուրացվի այն միտքը, վոր գտընվում և Լենինի՝ վերեռում բերված մի շարք կարծիքների մեջ, այսինքն՝ այն միտքը, վոր սրել ե նա ինքը, ասելով։

«Պրոլետարիատի դիկտատուրան համառ պայքար ե, արյունոտ և անարյուն, բռնադատական ու խաղաղ, ուազմական ու տնտեսական, գաղափարախոսական ու վարչական,—հին հասարակության ուժերի և տրադիցիաների դեմ» (Լենին, Տ. XVII, ՇՏԲ. 135—136):

Ահա թե ինչո՞ւ Լենինն ավելի ուշ ձեակերպում ե.

«Դիկտատուրայի գերազույն սկզբունքը—դյուղացիության հետ պրոլետարիատի դաշինքի պահպանությունն ե, վորպեսզի պրոլետարիատը կարողանա իր ձեռքում պահել ղեկավար դերը և պետական իշխանությունը» (Լենին, Տ. XVIII, Վ. I, ՇՏԲ. 331):

Լենինը հատկապես կանգ ե առնում՝ ի՞նչպիսի միուրյուն ենք մենք պատճենում։ պրոլետարիատի դիկտատուրան այդ կերպ հասկանալու վրա։

«Բանվոր դասակարգի և դյուղացիության մի-

ջե կայացած համաձայնության տակ ինչ ասես կարելի յե  
հասկանալ: Յեթև նկատի չառնենք, վոր բանվոր դա-  
սակարգի առակետից համաձայնությունը միայն այն  
ժամանակ է հանդիսանում թույլատրելի, ճիշտ ու սկզբ-  
րունքով հնարավոր, յերբ նա պատճանում է բանվոր  
դասակարգի դիկտատուրան և հանդիսանում է դասա-  
կարգերը վոչնչացնելու միջոցներից մեկը,—այդ գեպ-  
քում՝ գյուղացիության հետ բանվոր դասակարգի հա-  
մաձայնության ֆորմուլան, ի հարկե, մնում է վորպես  
ֆորմուլա, վոր անց են կացնում իրենց հայացքնե-  
րում խորհրդային իշխանության և դիկտատուրայի բո-  
լոր թշնամիները» (Լենին, Դ. XVIII, Վ. I, ստ. 257):

Տրոցկու ոլխավոր սխալներից մեկն այն և, վոր նա չի  
տեսնում շահագործողների դասակարգի և մանր ապրանք-  
արտադրողների դասակարգի վերաբերմամբ պրոլետարիատի  
դիկտատուրայի տարբեր քովանդակությունը: Իսկ նա այդ  
բանը չի տերնում այն պատճառով, վոր մանր գյուղացիա-  
կան անտեսության վերակազմության խնդիրն առհասարակ  
համարում և անիրազործելի: Այդ իսկ պատճառով նրա հա-  
մար պրոլետարիատի դիկտատուրայի հարցն ես չի կարող  
դրվել վորպես գյուղացիության հետ միություն, դաշինք  
կնքելու ձեւ:

«Հեղափոխական պրոլետարը,—պրում եք Լենինը,—  
պետք ե իմանա, թե ո՞ւմ պիտի ճնշել, ո՞ւմ հետ, յե՛րբ  
և ի՞նչպես պիտի կարողանալ համաձայնություն կա-  
պել» (Լենին, Դ. XV, ստ. 564):

Սակայն, կա նաև մի ուրիշ, տրոցկիզմին հակադիր, և  
վո՛չ պակաս մասակար սխալ: Այդ սխալի եյությունն այն  
է, վոր մանր բուրժուազիայի վերաբերմամբ պրոլետա-  
րիատի դիկտատուրայի մեջ տեսնում են միայն միություն:  
Մոռանում են, վոր դա յուրահատուկ միություն ե: Ամլաց-

նում են կենինի այն միտքը, թե այդ միությունը մանր գյուղացիությանը պրոլետարիատի ղեկավարության յենթարկելու յուրահատուկ մի ձև ե՝ ի շահ պրոլետարիատի վերջնական նպատակների համար մղված պայքարի, այն ե՝ արտադրության դործիքների սեփականատիրության վոչնչացումն և դասակարգերի վոչնչացումն։ Այդ սխալի մասին ընկ. Ստալինը կենինգրադի կազմակերպության ակտիվին 1926 թվի ապրիլին՝ «Խորհրդային Միության տնտեսական դրության մասին» արած իր զեկուցման մեջ ասում ե.

«Սակայն մենք պաշտպանում ենք վո՛չ ամեն ենակ միություն բանվոր դասակարգի ու գյուղացիության միջև։ Մենք կողմանակից ենք այնպիսի միության, վորտեղ ղեկավար դերը պատկանում ե բանվոր դասակարգին։ Ինչո՞ւ Վորովինետե առանց բանվոր դասակարգի ղեկավար դերի՝ բանվորների ու գյուղացիների միության սխառեմի մեջ՝ անհնարին և աշխատավորների և շահագործվող մասսաների հաղթանակը կարվածատերերի ու կապիտալիստների վրա։

Ես գիտեմ, վոր ընկերներից վոմանք համաձայն չեն դրան։ Նրանք ասում են, միությունը—լավ բան ե, բայց ել ինչի՞ համար ե բանվոր դասակարգի ղեկավարությունը։ Այդ ընկերները չարաշար սխալվում են։ Նրանք սխալվում են, վորովինետե չեն հասկանում, թե բանվորների ու գյուղացիների այնպիսի միությունը միայն կարող ե հաղթանակել, վորին ղեկավարում ե ամենափորձված և ամենահեղափոխական դասակարգը—բանվոր դասակարգը»։

Այդ մտքինը, Ստալինը վերադառնում ե «Համ. ԿԿ (Բ)կենտկոմի հուլիս. պլենումի արդյունքների մասին» իր զեկուցում։

«Կապը (սմիջկա) մեզ պետք ե վո՛չ թե նրա համար, վորպեսզի պահպանենք և հավերժացնենք դասա-

կարգերը։ Կապը մեզ պետք է նրա համար, վորպեսզի  
մոտեցնենք զյուղացիությունը բանվոր դասակարգին,  
վերադաստիարակենք զյուղացիությունը, վերափոխենք  
ինդիվիդուալիստի նրա հոգեբանությունը, վերամշա-  
կենք նրան կոլեկտիվիզմի վորով և այդպիսով նախա-  
պատրաստենք նրա լիկվիդացիան, դասակարգի վոչնչա-  
ցումը՝ սոցիալիստական հասարակության բազայի վրա։  
Ով այդ բանը չի հասկանում կամ չի ուզում ընդու-  
նել, նա մարքսիստ չե, լենինիստ չե, այլ զյուղական փիլի-  
սոփա յե, վոր նայում ե դեպի յետ, և վոչ թե առաջ։

Մեր յերկրում կապիտալիզմի վերա-  
հատանման ուժը կանգման հնարավորության մասին հարցի  
լենինյան այդպիսի գրույբին զուղընթաց՝ պետք ե քննել նաև  
մանր բուրժուազիայի այն առանձնահատկությունը, վոր  
լենինն անվանում եր «տատանման ուժ»։ 1921 թվին  
տրանսպորտի բանվորների համառուսական համագումա-  
րում խոսելով մանր բուրժուազիայի մասին, ընկ. լենինն  
իր ճառում ասաց.

«Դա ինքնուրույն դասակարգ ե, դա այն դասա-  
կարգն ե, վոր կալվածատերերին ու կապիտալիստնե-  
րին վոչնչացնելուց, նրանց վանդելուց հետո մնում ե  
վորպես միակ դասակարգը, ընդունակ՝ դիմադրելու  
պրոլետարիատին...»

Դուք գիտեք, թե ինչպիսին յե այդ ուժը՝ իր քա-  
ղաքական տրամադրության տեսակետից։ Դա—տան-  
ման ուժն ե... Այն չափով, վոր չափով չի հաջողվում  
պրոլետարիատին դեկավաել հեղափոխությունը, այդ  
ուժը միշտ անցնում ե բուրժուազիայի դեկավառքյան  
տակ» (լենին, թ. XVIII, գ. I, ստր. 178—179)։

Լենինը կարծում եր, թե զյուղացիության վերաբերմամբ  
բանվոր դասակարգը ճիշտ քաղաքականությամբ կարող է

հասնել այն բանին, վորպեսզի մանր բուրժուազիան ավելի ու ավելի քիչ տատանվի, վորպեսզի բանվոր դասակարգի և զյուղացիության միությունը սոցիալիզմի կառուցման գործում դառնա ավելի ու ավելի ամուր:

Ինչո՞ւմ պետք ե՝ կայանա բանվոր դասակարգի այդ ճիշտ քաղաքականությունը զյուղացիության վերաբերմամբ: Լենինի մտածությամբ, այդ քաղաքականությունը կայանում ե՝ մի կողմից՝ այն միջոցառումների սիստեմի մեջ, վորոնք կարող ելին ցույց տալ մանր գյուղացիությանը արտադրության սոցիալիստական ձևերի շահավետությունը, այն միջոցառումների սիստեմի մեջ, վորոնք տնտեսապես կշահագրգուելին գյուղացիությունը բանվոր դասակարգի հետ միություն կազմելու մեջ: Մյուս կողմից՝ գյուղացիության վերաբերմամբ բանվոր դասակարգի ունեցած ճիշտ քաղաքականությունը յինթաղբում ե՝ պրոլետարիատի կարողությունը՝

«...համաձայնության գալ միջին գյուղացու հետ, վոչ մի ըոպե չհրաժարվելով կուլակի դեմ պայքարից և հաստատապես հենվելով միայն չքավորության վրա» (Լենին, Տ. XV, ստ. 564):

Դա նշանակում է, վոր միջակի հետ սերտ միությունն անհնարին և անհասանելի յե՝ կուլակի վերաբերմամբ առանց վորոշակի, հետեղական, անհաշտ դասակարգային քաղաքականության (ուրեմն պահանջվում է չքավորի մաքսիմալ ակտիվացումն և նրա, վորպես միջակի ղեկավարի, կազմակերպումն՝ կուլակի դեմ տարվող պայքարի մեջ):

Ինչպես տեսնում ենք, մանր բուրժուազիումների քերի արիան. զիջումների թափառ անման ուժը պետք ե անպայման հաշվի առնի և հաշվի յե առնում կուսակցությունը: Ավելին. կուսակցությունն այդ գործոնը հաշվի յե առնում վոչ միայն միջին գյուղացիության վե-

րաբերմամբ կիրառվելիք տնտեսական միջոցառութերի մեջ, այլև, վո՞չ փոքր չափով, կուսակցության դասակարգային ամրող քաղաքականության մեջ զյուղում, քաղաքականություն, վոր ուղղված և կուլակի գեմ։ Այդ և կուսակցության դիմը։

Այդ գծից յերկու թերում դոյություն ունեն, յերկուսն և հավասարաբար վասակար։

Տրոցկիզմը հաշվի յե առնում մանր բուրժուազիայի տատանման ուժը։ Նա կարծում եւ, վոր այդ տատանումները հիմնականում տանում են զեպի բուրժուազիայի կողմը։ Այս-տեղից տառաջանում են տրոցկիստական հետեւթյունները պրոլետարիատի և զյուղացիության սոցիալիստական միության անհեթեթության ու անիրազործելիության մասին։

Տատանման ուժը հաշվի յեն առնում նաև կուսակցության աջ, ոպորտունիստական տարրերը։ Նրանք կարծում են, թե տատանումները հաղթահարելու միակ ուղին հանդիսանում և զյուղացիության հիմնական մասսային անելիք պերմանենա զիջումների քաղաքականությունը, յերբ այդ մասսան տատանվում և զեպի կապիտալիզմի կողմը, զեպի կուլակի հետ միություն կազմելու կողմը (ընկ. Լյազովի և մյօւսների թեորիան)։ Այդ տեսությունը հենց՝ հանդիսանում և մոռացումն իենինի մտքի, այն մասին, թե միությունը զյուղացիության հետ՝ պրոլետարիատի պայքարի յուրահատուկ ձև և մանր բուրժուազիայի դեմ՝ հանուն մանր բուրժուական սեփականության վոչնչացման, հանուն դասակարգային հասարակության վոչնչացման։ Այդ թեորիան արհամարհում, անտեսում և բանվոր դասակարգի և զյուղացիության միության լենինյան ըմբռնումը, այնպիսի միության, վորտեղ զեկավար դերը պատկանում և պետք է պատկանի պրոլետարիատին։ Այդ տեսությունը չի հասկանում դասակարգային պայքարի դերը, վորպես այնպիսի

գործոնի, վոր առաջնակարգ նշանակություն ունի բանվոր դասակարգի ու գյուղացիության միությունն ամրացնելու և թուլացնելու գործում. նա չի հասկանում բանվոր դասակարգի ղեկավար դերը այդ միության մեջ:

**Յերկու թրոն.** Հարցի լենինյան դրույքը մեր յերկը ներսում կապիտալիզմի վերականգման հնարավորության մասին չհասկանալը կուսակցության աջ, ոպորտունիստական տարրերի կողմից բերում հասցնում ենրանց մինչ այնտեղ, վոր նրանք չեն հասկանում լենինյան ուսմունքը բանվոր դասակարգի ու գյուղացիության միության մասին, լենինյան ուսմունքը պրոլետարիատի դիկտատուրայի մասին և դրանով ել անխուսափելիորեն նրանք հանդում են դասակարգային պայքարը սվաղելուն — դասակարգային թշնամու վտանգը չհասկանալուն:

Վորչափ տրոցկիստները (վորոնք գյուղացիությունը գլխսվին համարում են ռեալցիոն մասսա, վորոնք առհասարակ չեն հավատում կուլակի դեմ ուղղված գյուղացիական հիմնական մասսայի ու պրոլետարիատի միության հնարավորությանը) գերազնահատում են կուլակի ույժը և նրա ղեկավարիշխող տնտեսական ու քաղաքական դերը գյուղում, — նույնչափ ել աջերը այդ միության մեջ չեն տեսնում մանր բուրժուազիայի դեմ պրոլետարիատի պայքարի ձեեր (դրանք չեն հասկանում, վոր մանր բուրժուազիայի տատանումների դեմ կարելի յե և պետք ե պայքարել կուլակին մեկուսացնելու քաղաքականությամբ ուչ քավորությունը կազմակերպելով) և թերագնահատում են կապիտալիստական տարրերի դերը գյուղում, չեն հասկանում վորշակի դասակարգային գծի ամբողջ անհրաժեշտությունը:

Մեր կուսակցության XIV համագումարն արդեն վճռական պայքարը հայտարարեց կուսակցական ճիշտ գծից շեղված այս յերկու ժամանակակից թեքումների դեմ:

«Համագումարը վճռականապես դատապարտում և  
այն թեքումը, վորը կայանում և գյուղում դիմերեն-  
ցիացիայի թերագնահատման մեջ, վորը չի տեսնում  
այն վտանգները, վորոնք կապված են կուլակության  
և կապիտալիստական շահագործման տարրեր ձևերի  
աճման հետ, վորը չի ցանկանում հասկանալ կուլա-  
կությանը հականարդված տալու և նրա շահագործական  
ձգտումների սահմանափակման անհրաժեշտությունը,  
վորը չի տեսնում, թե պրոլետարիատի կուսակցու-  
թյունը պարտավոր և կազմակերպել և համախմբել  
չքավորությունն ու բատրակությունը կուլակի դեմ և  
նրա դեմ պայքարելու համար»

Համագումարը միաժամանակ նաև այդպիսի վճռա-  
կանությամբ դատապարտում և գյուղում տանելիք կո-  
մունիստական քաղաքականության հիմնական հարցը  
մթագնելու փորձերը, այսինքն՝ միջակ գյուղացու հա-  
մար, վորպես յերկրագործության կենտրոնական ֆի-  
զուրի համար, մղվող պայքարի հարցը, և կոռակե-  
րացիայի (վորպես գյուղը գեպի սոցիալիզմ տանող  
շարժման կազմակերպված հիմնական ձևի) հարցը»  
(Տես «XIV կուսամագումարի բանաձևերն ու վո-  
րոշումները»):

Ժամանակակից թեքումների այդ բնութարգումն  
իր հետագա զարգացումն ստացավ ընկ. Ստալինի ճառի մեջ,  
արտառանած Մոսկվայի կոմիտեյի և Մոսկվայի Վերահըս-  
կիչ Հանձնաժողովի հոկտեմբերյան պլենումում.

«Ինչում և կայանում աջ, բացահայտորեն ոպոր-  
տունիստական թեքման վտանգը մեր կուսակցության  
մեջ: Նրանում, վոր նա թերագնահատում և մեր թըշ-  
նամիների ուժը, կապիտալիզմի ուժը, չի տեսնում  
կապիտալիզմի վերականգման վտանգը, չի հասկա-

նում դասակարգային պայքարի մեխանիկան պրո-  
լետարիատի ղիկտատուրայի պայմաններում, այդ  
պատճառով ել հեշտությամբ ուզում ե զիջումներ  
անել կապիտալիզմին, պահանջելով իջեցնել մեր  
ինդուստրիայի զարգացման տեմպը, թեթևացումն  
պահանջելով գյուղի ու քաղաքի կապիտալիստա-  
կան տարրերի համար, պահանջելով՝ յետին պլանի  
վրա քաշել կուտասություններին և խորհանտեսու-  
թյուններին վերաբերյալ հարցերը, պահանջելով մեղ-  
մացնել արտաքին առևտորի մոնոպոլիան և այլն և այլն:  
Անկասկած ե, վոր մեր կուսակցության մեջ աջ թեք-  
ման հաղթանակը ազատություն կտար կապիտալիզմի  
ուժերին, կքանդեր պլուտոսարիատի հեղափոխական  
դիրքերը և կքարձրացներ կապիտալիզմը վերականգ-  
նելու շանսերը մեր յերկրում:

Ինչում ե կայանում ձախ (արոցկիստական) թեք-  
ման վտանգը մեր կուսակցության մեջ: Նրանում,  
վոր նա զերազնանատում ե մեր թշնամիների ուժը,  
կապիտալիզմի ուժը, տեսնում ե միայն կապիտա-  
լիզմի ուժը, տեսնում ե միայն կապիտալիզմի վերա-  
կանգման հնարավորությունը, բայց չի տեսնում մեր  
յերկրի ուժերով սոցիալիզմի կառուցման հնարավորու-  
թյունը, ընկնում ե հուսահատության մեջ և ստիպ-  
ված՝ միիթարում ե իրեն մեր կուսակցության մեջ  
տերմիորիականության մասին արած շաղակրատան-  
քով: Լենինի այն խոսքերից, թե «քանի դեռ մենք ապ-  
րում ենք մանր գյուղացիական յերկրում, կապիտա-  
լիզմի համար Ռուսաստանում կա տնտեսական ավելի  
կայուն քաղաքացիական բան կոմունիզմի համար», — լենինի այդ  
խոսքերից ձախ թեքումն անում ե այն սխալ հետեւու-  
թյունը, իբր ԽՍՀՄ մեջ առհասարակ անհնարին ե սոցիա-

լիզմի կառուցումն ավարտելը, իբր բանվոր գասակարդի ու զյուղացիության միության գաղափարը հնացած դաղափար ե, իբր յեթև Արևմուտքում հաղթանակած հեղափոխության կողմից ողնություն չհասնի մեզ, պրոլետարիատի դիկտատուրան ԽՍՀՄ մեջ պետք է տապալվի կամ այլասերվի...» (Ստալին—1928 թ. հոկտեմբերին Համեմատի կ (թ) Մոսկվայի Կոմիտեյի և Մոսկվերահսկ. Հանձնաժողովի պլենումնում արտասահման ճառը):

### 3. ԽՆՉՈՅԻ ՊԵՏՔ Ն ԱՅԺՄ ՄՐՎԼԻ ԱԶ ՎՏԱՆԳԻՒՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀԱՐՑԸ

Կոմինտերնի VI Կոնցրեսը բանագործական շարժման հեռանկարների մասին մասմենտում առանձին ուժով հրապարակ ե դրվում աջ վտանգին վերաբերյալ հարցը միջազգային բանվորական շարժման և Կոմինտերնի մեջ, պետք է տանզի մասին. Պորպեսդի հասկանալի լինի, թե ինչո՞ւ ներկա մամենտում առանձին ուժով հրապարակ ե դրվում աջ վտանգին վերաբերյալ հարցը միջազգային բանվորական շարժման և Կոմինտերնի մեջ, պետք է տանզի մասին. Պիմել միջազգային բանվորական շարժման արդի կացության ու այն հեռանկարների վերլուծությանը, վորոնք տրված են Կոմինտերի VI կոնցրեսի թեզիներում Ներկա շրջանի առանձնահատկությունն այն ե, վոր կապիտալիստական ստարիլիզացիան (այժմ այդ արդեն պարզ յերեսը ե) վոչ միայն չվերացրեց կապիտալիզմի հակասությունները, այլև, ընդհակառակը, որեց դրանք: Այդ հակասությունները գնում են դասակարգային պայքարի ուժեղացման ու սրման (լարման) գծով, իմպերիալիստական պատերազմների, հետեապես՝ նաև քաղաքացիական պատերազմների նոր շարքի մերձեցման (նախապատրաստության) գծով, և կապիտալիստական աշխարհի ու ԽՍՀ Միության փոխհարաբերությունների լարման գծով: Միջազգային բանվորական շարժումը,

իմպերիալիստական պատերազմից հետո, մտնում ե իր վերելքի յերրորդ շրջանը:

«Ենթադրությունը հիմնականում այն շրջանն է, յերբ կապիտալիզմի և կոնոմիկան անցնում և մինչպատերազմյան մակարդակից, յերբ ԽՍՀՄ և կոնոմիկան ել համարյա միաժամանակ անցնում և այդ մակարդակից (այսպես կոչված՝ «ուեկոնստրուկտիվ շրջանի», նոր տեխնիկայի բազայի վրա տնտեսության սոցիալիստական ձևերի հետագա զարգացման սկիզբը): Կապիտալիստական աշխարհի համար այդ շրջանը տեխնիկայի արագ աճման շրջանն է, կարտելների, տրեստների, դեպի պետական կապիտալիզմը ունեցած ձգումների ուղեղ աճման և միաժամանակ համաշխարհային տնտեսության հակասությունների հզոր զարգացման շրջանն է, յերբ համաշխարհային տնտեսությունը շարժվում և այնպիսի ձևերով, վորոնք վորոշվում են կապիտալիզմի ճղնաժամի նախընթաց ամբողջ ընթացքով (սահմանափակված նեղ շուկաներ, ԽՍՀՄ, գաղութային շարժումներ, իմպերիալիզմի ներքին հակասությունների առումն): Այդ յերրորդ շրջանը, վոր առանձին սրությամբ լարեց հակասությունները արտադրողական ույժերի աճման ու նեղցած շուկաների միջև, անխուսափելի յեղարձնում իմպերիալիստական պատերազմների նոր շարքը՝ իմպերիալիստական պետությունների միջև, ԽՍՀՄ գեմ նրանց մղելիք պատերազմները, ազգայինազատական պատերազմները իմպերիալիզմի և իմպերիալիստների ինտերվենցիայի գեմ, անխուսափելի յեղարձնում դասակարգային հսկայական բաղկառմները: Սրելով միջազգային բոլոր հակասությունները (հակասություններ կապիտալիստական յերկրների ու ԽՍՀՄ միջև, Հյուսիսային Չինաստանի ու ազմական

ոկուպացիան, վորպես Զինաստանը բաժանելու և խմայե-  
րիալիստների միջև բորբոքվելիք պայքարի սկիզբ),  
որելով ներքին հակասությունները կապիտալիստական  
յերկրներում (բանվոր դասակարգի ձախանալու պրո-  
ցեսո, դասակարգային պայքարի լարում), ազատու-  
թյուն տալով գաղութային շարժմանը (Զինաստան,  
Հնդկաստան, Յեզիպտոս, Սիրիա),—այդ շրջանը կա-  
պիտալիստական ստարիլիզացիայի հակասությունների  
հետագա զարգացման միջոցով անխուսափելիորեն տա-  
նում և դեպի կապիտալիստական ստարիլիզացիայի  
հետագա ցնցումն ու քայքայումը և դեպի կապիտա-  
լիզմի ընդհանուր ճգնաժամի սաստիկ սրումն (Կոմին-  
տերնի VI կոնդրեսի թեզիսներն ու վորոշումները, վ. Ա.,  
стր. 20):

Կոմմունիստական կուսակցությունների առաջ կանգ-  
նում և մարտական մի խնդիր—պատրաստել բանվոր դասա-  
կարգը ապագայի դասակարգային ճակատամարտների համար։  
Այդ պատրաստությունն, ամենից առաջ, նշանակում է՝  
պայքար սոցիալ-գեմոկրատիայի և կոմկուսների մեջ յեղած  
աջ տարրերի դեմ։ Հիշենք վերելում բերած՝ լենինի նախա-  
զգուշացումը, վոր նա 1920 թվին արել և խուլական կոմու-  
նիստական կուսակցությանը։

«Մերատին չհասկացավ անցողիկ այն մոմենտի  
առանձնահանակությունը, վորը կա Բուալիայում, վորտեղ,  
ընդհանուրի խոստովանությամբ, զործը զնում և դեպի  
վնասական նակատամարտները պրոլետարիատի ու բուր-  
ժուազիայի միջեվ՝ պետական իշխանությանը տիրանալու  
համար։ Այդ մոմենտին վո՞չ մայն անպայման անհրա-  
ժեշտ և կուսակցությունից հեռացնել մենշևիկներին,  
ուժորմիստներին ու տուրատիականներին, այլև կա-  
րող և ոգտակար լինել՝ պատասխանատու ամեն պաշ-

տոռնից հեռացնել առաջնակարգ այն կոմունիստներին, վորոնք ընդունակ են տատանվելու և տատանումներ առաջացնելու՝ ռեֆորմիստների հետ «միություն» կազմելու ուղղությամբ:

Կրերեմ մի շոշափելի որինակի Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես առաջ և հենց նրանից հետո մի շարք առաջնակարգ կոմունիստներ Ռուսաստանում պատասխանականի ականավոր բոյլշեիկներ, ինչպես ին են Զինովյեվը, Կամենենկը, Ռիկովը, Նոգինը, Միլյուտինը, իմ նշած շրջանում դրսեվորեցին տատանումներ, յերկյուղ կրելով, թե բոյլշեիկները չափազանց մեկուսացնում են իրենց, չափազանց ռիսկով են դիմում ապստամբության, չափազանց անզիջողամիտ են «մենշեիկների» և «սոցիալիստ-հեղափոխականների» վորոշ մասի վերաբերմամբ: Կոնֆլիկտը հասավ մինչ այնտեղ, վոր վերոհիշյալ ընկերները դեմոնստրատիվ կերպով հեռացան կուսակցական և խորհրդային աշխատանքի բոլոր պատասխանատու պաշտոններից՝ ի մեծ ուրախություն խորհրդային հեղափոխության թշնամիների: Բանը հասավ այնտեղ, վոր մեր կուսակցության կենտրոնը կատաղի բանավեճ սկսեց հրաժարական տված ընկերների դեմ:

Այդպիսով, կենինը հաշվի առնելով իմպերիալիստական պատերազմից հետո մի շարք հեղափոխական յելութների վորձը, նախազգուշացնում և կոմկուսներին, թե—

«Հեղափոխուրյան նախորեյին յեզ նրա հաղրանակի համար մղվող ամենակատաղի պայքարի մոմենտներին կուսակցուրյան մեջ ամենաքերեվ տատանումներն ընդունակ են վոչնչացնել ամեն բան, տապալել հեղափոխուրյունը, խլել իշխանուրյունը պրոլետարիատի ձեռքից՝ վորովհետև այդ իշխանությունը դեռ թույլ է, վորով-

Հետեւ նրա վրա արվող գրոհը դեռ սաստիկ զորեղ և  
Յեթե տատանվող առաջնորդները այդ ժամանակ քաշ-  
վում են մի կողմ, դա վո՞չ թե թուլացնում, այլ ուժե-  
ղացնում և թե՛ կուսակցությունը, թե՛ բանվորական  
շարժումը և թե հեղափոխությունը:

Իտալիայում հեղափոխության հաղթանակի համար  
այժմ ամենաանհրաժեշտը և անպայման անհրաժեշտը  
այն է, վորագեղի Իտալիայում հեղափոխական պրոլետա-  
րիատի իրական ավանդարդը դառնա լիովին կոմունիս-  
տական կուսակցություն, վորն ընդունակ չի լինելու  
(ընդդումը Լենինինն է:—Խմբ.) տատանվելու և թու-  
լություն զբանորելու վճռական մոմենտին, —կուսակ-  
ցություն, վոր կարողանա իր մեջ հավաքել-կենտրո-  
նացնել մաքսիմալ ֆանատիզմ, անձնվիրություն հե-  
ղափոխությանը, յեռանդ, սխրալի համարձակություն-  
ի վճռականություն:

Անհրաժեշտ և հաղթանակել չափաչանց դըժ-  
վար, ծանր, հսկայական զոհեր պահանջող պայքա-  
րում, պետք և պաշտպանել ձեռք գցած իշխանու-  
թյունը այնպիսի պարագայում, յերբ ամբողջ աշխարհի  
բուժուազիան աներեւակայելիորեն սրում և իր հան-  
ցափորձերը, ինտրիկները, բամբասանքները, ամբաս-  
տանությունները և բռնությունները, պետք և պաշտ-  
պանել ձեռք գցած իշխանությունը այնպիսի պարա-  
գայում, յերբ ամենավանգավոր տատանումներ են դը-  
ժմիորում ամեն տեսակ մանր բուժուական գեմոկրատը,  
ամեն տեսակ տօւրատիանականը, ամեն կարգի ցցեն-  
տրիստը, ամեն կարգի սոցիալ-դեմոկրատը, սոցիա-  
լիստը, անարխիստը: Այդ մոմենտում, այդ պարագայում  
կուսակցությունը պիսե և հարյուր անգամ ավելի հաս-  
տակամ, վնասական, համարձակ, անձնվեց յեվ անողոք

լինի, քան սովորական կամ ավելի պակաս դժվար ժամանակ» (Լենին թ. XVII, ստր. 373—374):

Հենց այդ ձևով ել ընկ. Լենինը հարցը դնում եր նաև 1920 թվից մի փոքր ավելի առաջ և անկախ՝ անմիջական հեղափոխական պարագայից, բայց կապված իմպերիալիստական պատերազմի հետ: Նա վորոնում ե այն հանգամանքի պատճառները, թե ինչո՞ւ լինտերնացիոնալը բաժան-բաժան յեղավ, բայց այվեց ճիշտ այն ժամանակ, յերբ նա պետք ե խաղար խոշոր հեղափոխական դեր: Լենինը պնդում ե, վոր լինտերնացիոնալի կուսակցության կողմից բանվոր դասակարգի գործին դավաճաննելը բնավ պատահական չե:

«Պատերազմը բացահայտորեն ցույց տվեց, վոր կրիզիսի մոմենտին (իսկ իմպերիալիզմի եպոխան անխուսափելիորեն կինի ամեն կարգի նգնածամերի եպոխա) ուղղացունիստների հսկայական մասսան, վորին պաշտպանում և հաճախ ուղղություն ե տալիս բուրժուազիան (դա առանձնապես կարևոր ե), վագում, անցնում ե նրա կողմը, դավաճանում ե սոցիալիզմին, մասսում ե բանվորական գործին և սպանում ե այն: Ամեն նգնածամի ժամանակ բուրժուազիան պիտի ոգնի ուղղացունիստներին... Ուղղացունիստները — պըոլիտարական հեղափոխության բուրժուազիան թշնամիներն են, վորոնք խաղաղ ժամանակ տանում են իրենց բուրժուազիան աշխատանքը թագուն, պահվելով բանվորական կուսակցությունների ներսում, իսկ կրիզիսի շրջանում միանգամից (ընդգծումը Լենինին ե:—Խմբ.) հանդիսանում են միացյալ ամբողջ բուրժուազիայի աշկարա դաշնակիցները... Ավ մեր ապրած դեպքերից նետո չի հասկացել այդ եւմարտուրյունը, նա անհուսալի կերպով խաբում ե թե՛ իրեն, թե՛ բանվորներին» (Լենին, թ. XIII, ստր. 31—32):

Այժմ, յերբ աշխարհը նորից կանգնած և իմպերիալիստական նոր պատերազմների և ԽՍՀՄ դեմ ինտերվենցիաների նոր փորձերի դիմաց, — չափազանց սպառակար և հիշել ենինի այդ խոռքերը: Չե՞ վոր դրությունն այժմ ավելի սուր և, քան 1914 թվին, վորովհետեւ այժմ ամբողջ աշխարհը դիտե, վոր իմպերիալիստական պատերազմը անխռուսափելիորեն (այժմյան պայմաններում) կփոխվի քաղաքացիական պատերազմի: Յելնելով հենց այն հանգամանքից, վոր մննք կանգնած ենք իմպերիալիստական պատերազմների և պրոլետարական հեղափոխությունների նոր շարքի դիմաց, պետք և գնահատել դրությունը նաև կոմինտերնի մեջ:

Զպետք և մոռանալ Լենինի հիշեցումն այն մասին, վոր ոպորտունիստական դավաճանությունների, «դեռ ու զենքնելու» վտանգը կայանում և վո՛չ թե առանձին առաջնորդների դավաճանության մեջ, այլ վոր «նրանց նշանակությունը վորոշվում և մանր բուրժուական ոպորտունիստների խավի և հոսանքի դոյությամբ»:

Մանր բուրժուազիայի և բուրժուական (սոցիալ դեմոկրատական և ուրիշ ամեն կարգի) ազդեցության տակ գտնվող բանվորների գլխավոր տատանումները վորքան ավելի մոտ են իմպերիալիստական պատերազմներին ու դասակարգերի վճռական ճակատամարտներին, այնքան ավելի ու ավելի յեն մղում նրանց հաջողվելու կապիտալիզմի հետ, յետաձգելու դասակարգային բաղխումները և այդ հսկայական բաղխումների դիմաց տեղի տալու:

Սակայն, պայցքարի սրումը դեպի աջ, բնավ չի նշանակում պայցքարի մեղմացումն գեպի ձախ: Ընդհակառակը: Աջ վտանգի դեմ հաջող պայցքարը հնարավոր և միայն այն դեպքում, յերբ կոմկուտն իր շուրջը կհամախմբի բանվորական մասսաները, վորին արգելք են հանդիսանում հենց

ձախերը, վորոնք չեն հասկանում, թե անհրաժեշտ ե մասսաները գրավել, համախմբել կոմիտաների շուրջը:

«Կոմունիստական կուսակցությունների ներսում ներկայումս—կազիտալիզմի մասնակի ստարիլիզացիայի հիման վրա և սոցիալ դեմոկրատիայի ազդեցության անմիջական հետևանքով—թեքման գլխավոր դիմը քաղաքական ուղիղ դիրքից գնում ե դեպի աջ: Դա արտահայտվում է «լեզալիզմի» և ավելորդ որինահնազանդության մնացորդների մեջ, գործադուլային շարժման վերաբերմամբ «խվոստիզմի» մեջ, դեպի սոցիալ-դեմոկրատիան ունեցած սխալ վերաբերմունքի (որինակ՝ վորոշ դիմադրությունը Կիկի Խ պլենումի վորոշումներին), միջազգային դեպքերի վերաբերմամբ վո՛չ բավարար հակազդեցության մեջ ևայլուն: Այդ աջ թեումները, յերբ գոյուրյուն ունեն համեմատաբար ուժեղ սոցիալ-դեմոկրատական կուսակցություններ, առանձնապես վտանգավոր են, յեկ պայմանը նրանց դեմ պետք ե դրվի առաջին պլանի վրա, Վորը յեկ պահանջում է սիստեմատիկ պայման կուսակցության ներսում աջ հոսանքների նկատմամբ, հաւաքսողական վերաբերմունքի դեմ: Սակայն, դրան զուգընթաց կան նաև «ձախ» թեքումներ, վորոնք արտահայտվում են միասնական ֆրոնտի տակտիկան բացասելու վորոշ տենդենցի մեջ, պրոֆմիութենական աշխատանքի խոշոր նշանակությունը չհասկանալու մեջ, հեղափոխական ֆռազայի քաղաքականության մեջ և — Զինաստանում—պուտչական տենդենցների մեջ» (Կոմինտերնի VI կոնգրեսի թեզիսներն ու բանաձեռքը, Երև. I, стр. 77):

Հնկ. Մտալինը Մոսկվայի Կոմիտեյի և Մոսկվայի Վերահսկիչ Հանձնաժողովի հոկտեմբերյան պլենումում արտասո-

նած իր ճառում հետելալ ձեռվ բնորոշեց աջ թեքումը կա-  
պիտալիզմի պայմաններում.

«Կոմունիզմի մեջ աջ թեքումը՝ կապիտալիզմի պայ-  
մաններում նշանակում է կոմունիստների մի մասի  
տենդենց, հակամիտություն, ճիշտ ե, զեռ չձևակերպ-  
ված և նույնիսկ չգիտակցված, բայց այնուամենայնիվ՝  
հակամիտություն՝ հեռանալու մարքսիզմի հեղափո-  
խական գծից զետի սոցիալ-դեմոկրատիայի կողմը։  
Յերբ կոմունիստների վորոշ շրջանները բացասում են  
ընտրական պայքարի մեջ (Ֆրանսիա) «դասակարգը  
դասակարգի գեմ» լոգունդի նպատակահարմարու-  
թյունը, կամ զուրս են զալիս կոմկուսների ինքնու-  
րույն թեկնածուների գեմ (Անգլիա), կամ չեն կամե-  
նում որել պայքարի հարցը «ձախ» սոցիալ-դեմոկրատ-  
իայի գեմ (Գերմանիա) ևայլն ևայլն, —դա նշանա-  
կում ե, վոր կոմկուսների ներսում կան մարդիկ, վո-  
րոնք աշխատում են կոմունիզմը հարմարեցնել դեմո-  
կրատիզմին։ Աջ թեքման հաղթանակը կապիտալիս-  
տական յերկրների կոմկուսներում կնշանակեր կոմ-  
կուսների զաղափարական կործանումն և սոցիալ-դեմո-  
կրատիզմի հսկայական ուժեղացնումն իսկ ի՞նչ և  
նշանակում սոցիալ-դեմոկրատիզմի հսկայական ուժե-  
ղացնումն։ Դա կապիտալիզմի ուժեղացումն ու ամրա-  
ցումն ե, վորովհետեւ սոցիալ-դեմոկրատիան հանդիսա-  
նում է կապիտալիզմի գլխավոր հենակը բանվոր դա-  
սակարգի մեջ։ Հետևաբար, աջ թեքման հաղթանակը  
կապիտալիստական յերկրների կոմկուսներում տանում ե  
զեպի այն պայմանների աճումն, վորոնք անհրա-  
ժիշտ են կապիտալիզմի պահպանության համար» (Ստա-  
լին, —Համ. ԿԿ(բ)Մոսկվայի Կոմիտեյի և Մոսկ. Վերահսկ.  
Հանձնաժողովի պլենումում արտասանած ճառը):

Մենք վերևում արդեն ասացինք այն  
Գասակարգերի մասին, թե թեքումների հիմքը (այն հողի  
փոխնարարե- հիմքը, վոր սնում և նրանց) հանդիսա-  
րությունը.  
նում և մանր բուրժուական տարերքը և  
այն ազդեցությունը, վոր ունի այդ մանր  
բուրժուական տարերքը պլոյետարիատի (իր կազմով և  
դասակարգային տոկունության աստիճանով վո՛չ միատե-  
սակ) առանձին խավերի վրա: Կապիտալիզմի և բանվոր դա-  
սակարգի միջև դասակարգային պայքարի պարագայում  
(մանավանդ այն մեծ բեկումների մոմենտներին, վորոնք  
կապված են դասակարգային ուժերի վերախմբավորման  
հետ) մանր բուրժուազիան տատանվում և մերթ այս, մերթ  
այն կողմը, և այդ բանը առաջ և բերում աջ ու «ձախ»  
մանր բուրժուական տրամադրություններ նաև բանվորա-  
կան շարժման մեջ:

Մեր յերկրում կա դասակարգային պայքար (կրկնակի  
պայքար—յերկրի ներսում և կապիտալիստական աշխարհի  
ու ԽՍՀՄ միջև), մեր յերկրում, ուր մանր բուրժուազիան  
(գյուղացիությունը) թվով գերակշռում է: Դա արդեն միան-  
դամայն բավարար հող և բոլոր և ամեն տեսակ թեքում-  
ների համար—թե աջ և թե ձախ:

Պետք ե հաշվի առնել, վոր սոցիալիզմի կառուցման  
հաջողությունները կապված են դասակարգային պայքարի  
սրման հետ:

Ուստի, յեթե մենք ուզում ենք պարզել այն կոնկրետ  
պայմանները, վորոնք տվյալ ետապում վորոշում են թե-  
քումների վտանգը, մենք անհրաժեշտաբար պետք ե քննենք,  
թեկուզ ընդհանուր գծերով, դասակարգերի կոնկրետ փոխ-  
հարաբերությունը, թե ինչպես և այն դարգանում այժմ  
մեր յերկրում:

Առաջին: - Բանվոր դասակարգը արշա-  
Բանվոր դասա- վում և կապիտալիզմի վրա և վարում է  
կարգը. սոցիալիզմի շինարարությունը: Սոցիալիս-  
տական շինարարության աճման հետ միա-  
սին աճում և նաև ինքը բանվոր դասակարգը և ավելի ու  
ավելի կոնսոլիդացման և յենթարկվում: Դասակարգային  
գիտակցության հսկայական աճումը, մյուս բոլոր դասակար-  
գերի համեմատությամբ՝ պրոլետարիատի ակտիվության  
ամենամեծ աճումը իրենց արտահայտությունն են գտնում  
թե՛ յերկրի կառավարման մեջ նորանոր կազմեր առաջ  
բաշելու իրողության մեջ և թե մեր կուսակցության շուրջը  
ավելի ու ավելի մասսաներ համախմբվելու մեջ:

Բայց միաժամանակ պետք և հաշվի առնել և այն, վոր  
բանվոր դասակարգը բնավ միատարր չե, և սոցիալիզմի  
աճումը, պրոլետարիատի քանակության աճումը պայմա-  
նավորում են, զգալի չափով, նրա այդ վո՛չ միատարրու-  
թյունը: Ել չենք խոսում այն մասին, վոր ինքը բան-  
վոր դասակարգը մեզանում բացառապես ուժեղ կերպով  
կազմած և գյուղի հետ, նրա մեջ մշտապես նոր ուժեր են  
լցվում անմիջապես գյուղից և քաղաքի մանր բուրժուազիա-  
յից: Այդ շերտերը բերում են իրենց հետ մանր բուրժուա-  
կան տատանումներ՝ մանր բուրժուական ուժորմիզմի,  
ոպորտունիզմի, ինչպես նաև մանր բուրժուական հեղափո-  
խականության տրամադրությունների ձևով:

Մակայն, դրանից զատ, չպետք և մոռանալ, վոր մեր  
բանվոր դասակարգի մեջ, չքավոր ու սակավունակ միջին  
գյուղացիության ներկայացուցիչների հետ միասին (դրանք, իհարկե, ճնշող մեծամասնություն են կազմում) ներս են  
սպրոցում նաև այնպիսի տարրեր, վորոնք կապված են վոչ  
թե չքավոր ու սակավունակ տնտեսությունների հետ, այլ  
գյուղի ունեոր և նույնիսկ շահագործող տնտեսությունների

հետո: Այդ գլուխթյունը (այսինքն՝ գյուղի ունկոր մասի կողմից վորոշ հոսանքը գեպի քաղաք, գեպի բանվոր դասակարգի շարքերը) հետևանք է այն բանի, վոր բանվոր դասակարգը մեր յերկրում իշխող դասակարգ է, վորպիսի հանդամանքը չի կարող «քսմավելու» ցանկություն չառաջացնել բանվոր դասակարգին խորթ տարրերի մեջ (մանավանդ այժմ, յերբ բանվոր դասակարգի նյութական և կուլտուրական մակարդակը սաստիկ բարձրացել է): Պետք է հաշվի առնել այդ մոմենտը, այսինքն՝ յերբ բանվոր դասակարգի մեջ կան դյուղի պրոլետարականացող խավերից դուրս յեկած ու բանվորական միջավայրում դեռ չմտափոխված տարրեր, այլ և ուղղակի դասակարգայնորեն թշնամի տարրեր (կուլակային յելույթները վորոշ գործարաններում):

Վորպես այդ մոմենտի հաշվառման որինակ կարելի յե զերցնել այն, ինչ ասել ե Լենինը 1922 թվին, կուսակցության XI համագումարում արած իր զեկուցման մեջ.

«Եատ հաճախ, յերբ ասում են «բանվորներ», կարծում են թե դա նշանակում է ֆաբրիկ-գործարանային պրոլետարիատ: Բնավ այդ չի նշանակում: Մեզանում պատերազմի ժամանակ ֆաբրիկ և գործարան մտան այնպիսի մարդիկ, վորոնք ամենենին պրոլետարներ չեյին, և գործարան գնացին վորպեսզի այնտեղ պահվեն պատերազմից: Մի՞թե այժմ մեզանում հասարակական և տնտեսական պայմաններն այնպես են, վոր ֆաբրիկ ու գործարան են գնում իսկական պրոլետարները: Դա ճիշտ չե: Դա ճիշտ ե ըստ Մարքսի, բայց Մարքսը գրել ե վոչ թե Ռուսաստանի համար, այլ ամբողջ կապիտալիզմի համար ընդհանուր առմամբ, սկսած XV դարից: 600 տարվա ընթացքում դա ճիշտ ե յեղել, իսկ այժման Ռուսաստանի համար ճիշտ չե: Միշտ և ամեն քայլափոխում այն ժամանակ ֆաբրիկ

Եյին գնում վո՞չ թե պրոլետարները, այլ ամեն տեսակ պատահական տարրեր» (Լենին, Դ. XVIII, Վ. II, ստր. 51):

Սակայն, յեթե իմպերիալիստական պատերազմի ժամանակ գործարան եր գնում, ինչպես Լենինն և նշում, նաև խորթ տարրը, վորպեսզի այնտեղ պահպի պատերազմից,— յեթե սովոր տարիներին, յերբ իսկական պրոլետարների խոշոր մասը ֆրոնտում եր, բանվոր դասակարգի մեջ լցվում եյին նրան խորթ տարրեր այն պատճառով, վոր բանվորներն ստանում եյին, թեկուզ փոքրիկ, այնուամենայնիվ պայոկ, — հապա՝ այժմ չի կարելի հաշվի չառնել, վոր բանվոր դասակարգի իշխող դրությունը, բանվոր դասակարգի կյանքի նյութական և կուլտուրական մակարդակի աճումը նույնպես պետք է անխուսափելիքն առաջացնեն բանվոր դասակարգի վորոշ պղտորումն ուսար տարրերով: Իհարկե, նրանք չեն, վոր վորոշում են բանվոր դասակարգի գեմքը: Բայց նրանք կարող են ազդել և ազդում են ավելի նվազ կայուն, դասակարգայնորեն ավելի պակաս դիմացկուն տարրերի վրա (բանվոր դասակարգի մեջ): Այս ամենը միասին վերցրած՝ չի կարող բանվոր դասակարգի մեջ առաջ չըերել մանը բուրժուական տատանումների արտահայտություններ, մանավանդ աջ տեսակի աատահայտություններ:

Յերկրորդ:—Մենք սկսում ենք լրջորեն և

Գյուղացիուն ինչպես հարկն և վերակառուցել գյուղը: Բյուներ.

Սկսում ե ճաքճքվել և փուլ գալ սեփականականատիրական կենցաղի ձևը: Գյուղատընտեսական արտադրանքների շրջանառության պրոցեսների կողմերացիայից մենք անցնում ենք գյուղատնտեսական արտադրության կողմերացմանը:

Այժմ «ով—ում?» հարցը

«...առեւտրի ասպարիզից փոխադրվում և արտադրության ասպարեզը, տնայնագործության արտա-

դրության ասպարեզը, գյուղատնտեսական արտադրության ասպարեզը...» (Ստալին. — Կենտկոմի քաղաքական հաշվետվությունը XV համագումարին):

Չքավորությունն ավելի սերտորեն և համախմբվում պրոլետարիատի շուրջը, ավելի ակտիվ մասնակցություն ցույց տալով գյուղի վերակառուցման դործին, հանդիսանալով պրոլետարիատի հենակը՝ հոգուտ միջին տարրի, ինչպես նաև կուլակին խրկելու համար մղվող պայքարում։ Իհարկե, չպետք և թերագնահատել կուլակի տնտեսական հեղինակության գերը։ Չպետք և աչքաթող անել և այն, վոր դիմերենցիայի փաստն ինքնին, չքավորների մի մասը հասցնելով պրոլետարիզացման, չի կարող դժոնության վորոշարրեր չստեղծել նրա շարքերում։

Բանվոր դասակարգի հարաբերությունը գյուղացիության կենտրոնական ֆիգուրի—միջին խավի—հետ, անկասկած, միության հարաբերություն և։ Իհարկե, թե՛ դասակարգացին պայքարի սրումը, թե՛ անցյալ տարվա տնտեսական դժվարությունները, թե՛ արտակարգ միջոցների կիրառման մեջ յեղած սխալները չեյին կարող միջին խավի մեջ չստեղծել վորոշ անվտանգություն, վորոշ տատանումներ։ Դա անխուսափելի յե՛ դասակարգային լուրջ վերախմբավորումների մոմենտներին։ Սակայն, միանգամայն պարզորոշ այդ մասին ասացին Համ. ԿԿ(բ) կենտկոմի վերջին պլենումները, թե բանվոր դասակարգի ու գյուղացիության միությունը խախտված չե և խոսք չի կարող լինել այդ միության լուծման մասին։ Այժմ բանվոր դասակարգի դիմաց դրվում և առաջնակարգ ինդիր—ե՛լ ավելի ամրապնդել միությունը միջին խավի հետ՝ կուլակի դեմ մղվող պայքարի և գյուղի արտադրողական կոռպակերացման հիման վրա։

Վնասակար կլինի թերագնահատել, վոր այդ վերակառուցման ամբողջ անհրաժեշտության հետ միասին (վոր

միջակ գյուղացին, և մանավանդ չքավորը, զգում ե) գյուղում  
մենք կհանդիպենք բեկվող կենցաղի հսկայական ընդդիմա-  
դրությանը, անհատական անշարժությանը և իր անհատական  
տնտեսությանը կառչելու հսկայական ճիգերին:

Լենինն ասում ե.

«Վոչնչացնել դասակարգերը—նշանակում ե՝ վոչ  
միայն վտարել կալվածատերերին ու կապիտալիստ-  
ներին,—մենք այդ բանն իրագործեցինք համեմատա-  
բար հեշտությամբ,—դա նշանակում ե՝ վոչնչացնել  
նաև մանր աղբանքարտադրողներին, խոկ նրանց չի  
կարելի վտարել, չի կարելի ճնշել, նրանց հետ պետք է  
համակերպվել—ապրել, նրանց կարելի յե (և պետք ե)  
վերափոխել վերադաստիարակել՝ սակայն չափազանց  
յերկարատե, դանդաղ, դղույշ կազմակերպչական աշ-  
խատանքով...

Միլիոնների, տասնյակ միլիոնների սովորութիւնների ուժը  
ամենասարսափելի ուժն ե» (Լենին, Տ. XVII, ստր. 136):

Այն հանդամանքը, վոր մենք այժմ մոտեցանք «կազմա-  
կերպչական» այդ խնդրի լուրջ լուծմանը, անխուսափելիու-  
թեն առաջ կը բրի միջին գյուղացիության շարքերում, մա-  
սամբ նաև չքավորության մեջ, մանր բուրժուական  
տատանում, ինչպես նաև առաջ կը բրի մանր բուրժուական  
հակահարված ընդդիմ պրոլետարիատի կոլեկտիվիզատորա-  
կան, «կազմակերպչական» աշխատանքին: Այդ տատանում-  
ներն առանձնապես հնարավոր ու հավանական են, վոր  
մանր սեփականատիրական գյուղացիական կենցաղի սոցիա-  
լիստական վերակառուցման հսկայական խնդիրը տեղի  
ունի մեզանում այնպիսի պարագայում, յերբ գյուղում մենք  
ունենք, մանավանդ միջին գյուղացիության վերին խավե-  
րում, գծուծ, անհատական տրամադրությունների աճումն՝  
արդյունավետության և կուտակումների այնպիսի աճման

հիման վրա, վորի մասին ասված և Համ.Կկ(բ) կենտկոմի ապրիլյան և հուլիսյան պլենումների բանաձեռում (ի միջի այլոց, այդ բանը բավական պայծառ իր արտահայտությունն և գոտնում աղանդավարության աճումի մեջ): Այդ ամենին միանում և դասակարգային պայքարի սրման մոմենտը՝ Ինարկե, կուլակը կողտագործի թե՛ անշարժության ուժը—«սովորութիւնը», թե գծուծության տրամադրությունը մեր դեմ, կուսակցության սոցիալիստական, դասակարգային քաղաքականության դեմ զյուղում, ինչպես նաև ինդուստրացման դեմ: Դա նշանակում և, վոր դասակարգային պայքարի սրումով և տնտեսական դժվարությունների հետևանքով կրկնապատկված՝ անհատական կենցաղի անշարժության ուժը, «գյուղական կյանքի այն ժիղկոտիզմի» ուժը, վորի մասին ասել և Ենգելուը և վորը մենք սկսում ենք բեկանել իր արմատում,—պիտի ճնշի մեզ, պիտի զգալ տա իրեն՝ թե բանվոր դասակարգի մեջ և թե կուսակցության մեջ:

«Նրանք. (մանր ապրանքարտագրողները: — ԽՄԲ.)

ամեն կողմով շրջափակում են պրոլետարիատին մանր բուրժուական տարերքով, նրան համակում են դրանով, նրան այլասերում դրանով, մշտապես պրոլետարիատի շարքերում առաջացնում են մանր բուրժուական կամագրկության, բաժան-բաժանության, ինդիվիդուալիզմի, վոգեգրավչանքից դեպի հուսահատության անցնելու ռեցիդիվիսեր» («Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ», Լենին, Տ. XVII, ս. 136):

Յերրորդ: — Տնտեսության սոցիալիստա-

կապիտալիստական սեկտորի աճման հետ միասին բերքական տարրերը. ուստի վերջին յերեք տարին իրենց զգալ տվին արդյունքատվության աճման մեջ դյուղում, մանավանդ նրա ունեոր ու կուլակային վերին խավերում, և այդ ֆրոնտում կուլակի վորոշ աճման մեջ:

Այդ մոմենտներն իրենց արտահայտությունը գտան կենտ-  
կոմի վերջին պլենումների բանաձևերում։ Ապրիլյան պլենումը  
հացամթերումների հարցին վերաբերյալ բանաձևումնշելե, թե՝

«Այդ դժվարությունների հիմքում զրված եր շուկա-  
յին հավասարակշռության սուր խախտումը, ըստ  
վորում, շուկային հարաբերություններում անհամա-  
չափությունների (զիսպրոպրցիա) սրումը բացատըր-  
վում ե զյուղի, մանավանդ նրա ունեոր և կուլակային  
խավերի արդյունքատվության բարձրացումով»։

Այնուհետև նույն պլենումը նշում ե, թե՝

«Տնտեսական պարագան (վոր դժվարություններ  
առաջ բերեց:—Խմբ.) անքակտելիորեն կապված եր  
սոցիալ-դասակարգային արտահայտության հետ։ Դյուլի  
հետազա շերտավորման հետելանելով տնտեսական պարա-  
գան հնարավորուրյուն տվեց կուլակուրյանը, վորի տըն-  
տեսական տեսակարար կօֆուն անել եր, ողտագործել  
շուկայում բռնած իր դիրքերը, թեև հացի գլխավոր  
մասսան նրա ձեռքում չեր»...

Բնական ե, վոր յերբ բանվոր դասակարգը ուժեղ արշավ  
սկսեց կուլակի դեմ և ձեռք զարկեց կուլակի ուժի հիմքը  
վոչնչացնելու հետ կապված վերակառուցման գործին—մանր  
դյուլացիական տնտեսության արտադրողական կոռպերաց-  
մանը և կոլեկտիվացմանը,—այդ կուլակը ուժեղացրեց իր  
հականարդածը, մորիլիզացիայի յենթարկելով իր բոլոր  
ուժերը, իր ամբողջ ազգեցությունը։

Կապիտալիստական տարրերը (կուլակը, նեպմանը, սպե-  
կուլյանաց), վորոնց վրա մենք ճնշում ենք գործ զնում մեր  
սոցիալիստական տնտեսությամբ, և վորոնք լարված ուժե-  
րով կովում են, վորպեսզի պաշտպանեն կապիտալիզմի  
դիրքերը և հակազդեն պրոլետարիատի արշավին,—դասա-  
կարգային այնպիսի գործոն ե (Փակտոր), վոր պետք ե

հաշվի առնելը Դա պետք և հաշվի առնել վո՞չ միայն կուլակի կողմից սպասվող վտանգի տեսակետից, այլև այն տեսակետից, վոր կուլակի ակտիվացումը զյուղում չի կարող տատանողական տրամադրությունները չստեղծել միջին զյուղացիության մասսաներում, մանավանդ նրա վերջին շերտերում։ Տնտեսական գժվարություններից ուժեղացած այդ տատանումները չեն կարող ճնշում գործ չդնել բանվոր դասակարգի և նրա կուսակցության վրա, վորտեղ նրանք պարզ արտահայտվում են աջ թեքման ձևով։

Գորրորդ։—Այդ գժգոհությունն ե, վոր Քաղաքային մանր բուրժուազիան։ գույություն ունի այնպիսի խավերում, վորպակիսին են աճող սոցիալիստական արդյունաբերության կողմից հետզհետե վտարվող տնայնագործներն ու արհեստավորները, և այնպիսի տարրերում, ինչպիս որինակ՝ գործազուրկներն են։ Այստեղ կա մեծ գժգոհություն, վորը կարող և գնալ անարխիստական արամադրությունների գծով և բուրժուական-դեմոկրատական բողոքի գծով՝ ընդդեմ պրոլետարիատի դասակարգային քաղաքականության։

Հինգերորդ։—Մեր յերկրում կան նախնական կապի կին կապիտալիստների դասակարգի փշընքատիւսներն ու ներ և անցյալում առանձնապես արտոնյալ մասնագետները։ մասնագետների շերտ։ Այդ կարգի տարրերը մինչեւ այսոր ել յերազում են հին իրավակարգի վերադարձի մասին։ Բուրժուական-հակահեղափոխական մասնագետների այս չնչին խմբակներն ինքնին, —շատ ավելի սակավաթիվ, քան այդ գոյություն ուներ ուազմական ինտերվենցիայի ժամանակ, —չեն կարող վտանգավոր լինել պրոլետարիատի դիկտատուրայի համար։ Սակայն, Շախտիի գործը ցույց տվեց, վոր միջազգային կապիտալը սաստիկ ոգտագործում է այդ տեսակ հակահեղափոխական փշընքները։

«Այդ յերկու ույժերը միացած իրար, հող են կազմում  
տնտեսական ինտերվենցիայի համար ԽՍՀՄ մեջ»:

Շախտիի դորձն

«... ստացավ բացահայտորեն համամիութենական  
նշանակություն, վորովհետև յերեան հանեց բուրժուա-  
կան հականեղափոխության պայքարի նոր ձեեր, նոր  
մեթոդներ պրոլետարական պետության դեմ» (Համ. Կկ. (բ))  
Կենտկոմի ապրիլյան ոլենումի բանաձեռը, 1928 թ.):

Մոմենաների այդ ամբողջ շրջանը չեր կարող չստեղծել  
այնպիսի գրությունն, յերբ աջ տրամադրությունները ուժեղ  
կերպով ներս են սովորակում կուսակցության մեջ:

Առանձնապես բացահայտորեն և աշկարա նրանք ներս են  
սպրոտում պետական ու տնտեսական ապարատի միջոցով:

Մենք ունենք պետական ու տնտեսա-  
թյուրոկրատիզմ, կան բյուրոկրատիկ այնպիսի մի ապարատ,  
վորը, ինչպես ապացուցեցին մի շարք գործեր (Սմոլին-  
սկի, Արտեմովվայի, Լուգորվայի եայլն), հաճախ ստորին ողակ-  
ներում բավական մոտիկ հարակցում, իսկ յերբեմն ուղղակի  
միանում և կուլակին: Կուսակցության կենտրոնական  
կոմիտեյի հունիսյան դիմումը՝ ինքնաքննադատության  
մասին՝ նշում ե.

«Սակայն, ներկայումս բանվոր դասակարգը միայն  
այդ թշնամիների հետ չե, վոր ընդհարվում ե: Նա իր  
ճանապարհին հանդիպում ե իր պետական ապարատի  
զարգելի բյուրոկրատիզմին, նրա անշարժությանն ու  
վրդովեցուցիչ ձգձգումներին, վորոնք հանդիսանում են  
հին չինովնիկական ժառանգության մնացորդներ և  
մասսաների յետամնացության ու անկուլտուրականու-  
թյան արգասիք, «կառավարելու նրանց վո՞չ բավա-  
րար «ունակության» հետևանք, պետությունը և պետա-  
կան տնտեսությունը իրապես կառավարելու գործում

այդ մասսաները վո՞չ բավարար արագությամբ ներգրավելու արդյունքի Բանվոր դասակարգը իր ճանապարհին հանդիպում և ապարատի քայլայված ողերին, նրա ժանգոտած և փթած մասերին... Կենտկոմը հայտարարում ե, վոր վերակառուցողական շըրջանի խնդիրները չեն կարող լուծվել, մինչեւ վոր ամենայն համարձակությամբ, ամենայն վճռականությամբ, ամենայն հետեւղականությամբ մասսաները չառնվեն սոցիալիստական շինարարության գործի մեջ, մինչեւ վոր միլիոնավոր այդ մասսաները չստուգեն և վերահսկողության չենթարկեն ամբողջ ապարատը ու դաշտեն անպետք տարրերից:

Կապիտալիստական տարրերի վերաբերմամբ դասակարգային քաղաքականության կիրառումը, ինչպես նաև ինքնաքննադատության ուղղությամբ վերցրած կուրսը, ուղղակի սպառնալիք և հանդիսանում ապարատի բյուրոկրատիկ, իսկ առավել ևս՝ քայլայված դասակարգային իրենց դեմքը կորցրած ողակների համար և հակահարված և առաջ բերում կուսակցության դասակարգային քաղաքականության դեմ»:

### Մինչդեռ—

«Կոմունիզմի մեջ աջ թեքումը խորհրդային զարգացման պայմաններում,—վորտեղ արդեն տապալված և կապիտալիզմը, բայց վորտեղ նա դեռ արմատախիլ չի՝ արված, —նշանակում և կոմունիստների վորոշմասի տեսնդենց, հակամիտություն, ճիշտ և դեռ չձևակերպված և նույնիսկ՝ դեռ չգիտակցված, բայց այնուամենայնիվ հակամիտություն՝ շեղվելու մեր կուսակցության գլխավոր գծից և գնալու բուրժուական գաղփարախոսության կողմը...Մեր կուսակցության մեջ աջ թեքման հաղթանակը կնշանակեր կապիտալիստական

տարրերի հսկայական ուժեղացումն մեր յերկրի մեջ։  
Իսկ ի՞նչ և նշանակում կապիտալիստական տարրերի  
ուժեղացումն մեր յերկրում։ Դա նշանակում և պրոլե-  
տարական դիկտատուրայի թուլացումն և կապիտա-  
լիզմի վերականգման շանսերի ուժեղացումն։ Ասել  
կուղի, ազ քեման նադրանակը մեր կուսակցության  
մեջ կնօանակեր այն պայմանների անումն, վորոնի ան-  
հրածես են մեր յերկրում կապիտալիզմի վերականգման  
համար» (ընկ. Ստալինի ճառը, արտասանած Սոսկ-  
վայի Կոմիտեյի VI պլենումում)։

Միաժամանակ չպետք ե մոռանալ, վոր  
Վո՞ր քերումն ե տատանվող մանր բուրժուական տարրերի  
ավելի վտան- միջավայրը սնուցանում և ինչպես աջ,  
գալոր. նույնպես և ձախ թեքումները բոյլզիկիկ-  
յան գլխավոր գծից։ Սակայն, այն ժամանակ, յերբ կուսակ-  
ցության ԽIV համագումարը, հաշվի առնելով այն շրջա-  
նում կուսակցության համեմատաբար մեծ պատրաստակա-  
նությունը՝ հաղթահարելու աջ թեքումը, առանձնապես շեշ-  
տում եր Շաման թեքման դեմ պայքարի անհրաժեշտու-  
թյունը, —մենք ներկա ետապում ստիպված ենք այդ հարցը  
վճռել այլ կերպ, այսինքն՝ այնպես, ինչպես ասաց այդ  
մասին ընկ. Ստալինը Մկ և ՄՎՀ հոկտեմբերյան պլե-  
նումում։

«Այդ վտանգներից վո՞րն և ավելի վատ։ Իմ կար-  
ծիքով յերկուսն ել հավասարապես վատ են։ Տարբե-  
րությունն այդ յերկու թեքումների մեջ, նրանց դեմ  
մղելիք պայքարի հաջողության տեսակետից, այն և,  
վոր ձախ թեքումը տվյալ մոմենտում ավելի պարզ է,  
քան աջ թեքումը։ Այն հանգամանքը, վոր արդեն մի-  
քանի տարի յե, ինչ մեզանում ուժեղ պայքար և տար-  
վում ձախ թեքման դեմ, —անշուշտ, անհետեանք անց-

նել չեր կարող կուսակցության համար Պարզ ե, վոր ձախ—տրոցկիստական թեքման դեմ մղած պայքարի տարիներում կուսակցությունը շատ բան սովորեց և հեշտ չե ձախ ֆռազներով նրան խաբել: Ինչ վերաբերում ե աջ վտանգին, վորն առաջ ել գոյություն ուներ և վորն այժմ ավելի ուսուցիկ ձեռվ ե հանդես գալիս՝ անցյալ տարվա հացամթերման ճգնաժամի հետեանքով ուժեղացած մանր բուրժուական տարերքի շնորհիվ,—իմ կարծիքով, այդ վտանգն այնքան ել պարզ չե մեր կուսակցության վորոշ խավերի համար: Այդ պատճառով, խնդիրն այն ե, վորպեսզի, մի մազաշափ անգամ չթուլացնելով պայքարը ձախ՝ տրոցկիստական՝ վտանգի դեմ, ավելի շեշտվի պայքարը աջ թեքման դեմ և ձեռք առնվեն բոլոր միջոցները, վորպեսզի այդ թեքման վտանգը կուսակցության համար դառնա նույնքան պարզ, վորքան պարզ ե նրա համար տրոցկիստական վտանգը» (Ստալին.—Համ.ԿԿ(բ) ՄԿ և ՄՎՀ պլենումում 1928 թվի հոկտեմբերին արտասանած ճառը):

Միանդամայն բնական ե, վոր յերկու ֆրոնտում կուսակցության մղած ժամանակակից պայքարը, ինչպես միշտ, պահանջում ե ամենավճռական պայքար ամեն կարգի հանդուրժողականության արտահայտությունների դեմ, մանավանդ կենտրոնական վտանգի՝ աջ թեքման վերաբերմամբ:

«Մեզանում կուսակցության մեջ կան մարդիկ, վորոնք դեմ չեն, իրենց խղճի հանգստության համար, պայքար հայտարարելու աջ վտանգին, ճիշտ այնպես, ինչպես տերտերները յերբեմն բարբաջում են «ալելույա, ալելույա», սակայն, ձեռք չեն առնում վո՛չ մի, բացարձակապես վո՛չ մի միջոց, վորպեսզի պայքարը աջ թեքման դեմ հարկավոր հունի մեջ դնեն և իրապես դա

հաղթահարեն — հաղթահարեն այդ թեքումը։ Այդ հոսանքը մեզանում կոչվում է հաշտվողական հոսանք՝ աջ, բացահայտորեն ոպորտունիստական թեքման վերաբերմամբ։ Դժվարչե հասկանալ, վոր պայքարը նման տեսակի հաշտվողականության դեմ հանդիսանում է աջ թեքման, աջ-վտանգի դեմ հիմնական մասը։ Վորովինեսել անհնարին ե հաղրահարել աջ, ոպորտունիստական թեքումը, սիստեմատիկ պայքար չմղելով հաւսվողականության դեմ, վարն իր թեվերի տակ առած՝ պատճանում է ոպորտունիստին» (Ստալին. — 1928 թվի հոկտեմբերին)։

Ամբողջ նախընթացից պարզ է, վոր աջ Տնտեսական դրդությունները վտանգը մեր յերկրում և այդ վտանգը յեվ աջ վտանգը մեր կուսակցության մեջ արտացոլող աջ թեքումը չի կարելի պատճառաբանել մեր ապրած տնտեսական դժվարությունների փաստով միայն։ Մեր յերկրում աջ վտանգի և կուսակցության մեջ աջ թեքման իրողությունը արտացոլում են դասակարգային խոշոր վերախմբավորումները և, ամենից առաջ, այնպիսի վերախմբավորումներ, վորոնք տեղի ունեն կապիտալիզմի դեմ՝ մեր յերկրի սոցիալիստական տարրերի ուժեղ արշավի ազդեցության տակ ու կապիտալիզմի հիմքերը վոչնչացնելու համար վերցրած վճռական կուրսի հետևանքով (մանր գյուղացիական տնտեսության կոլեկտիվացումն)։ Տնտեսական դժվարությունները իհարկե, հսկայական դեր խաղացին, նախ, այն իմաստով, վոր նրանք սրեցին աջ տրամադրությունների դրսևորումը և ավելի վորոշակի ձև տվին նրանց։ Յերկրորդ, յեղած մեծ դժվարությունները հարկադրում են առանձին լրջությամբ մոտենալ աջ թեքմանը։ արհրաժեշտ ե մերկացնել կուսակցության դլխավոր գծի հետ անհամատեղելի և անընդունելի այն բոլոր գործնական առաջարկ-

ները, վոր արել են մեր կուսակցության աջ տարրերի ներկայացուցիչները (դիտակցարար և անդիտակցարար)՝ տնտեսական դժվարությունների առթիվ:

### ԴՐԱԿՈՆՈՒԹՅՈՒՆ

1. Сталин.—Речь на пленуме МК и МКИ ВКП(б). «Правда» от 23/X, 28 г.
2. Сталин.—Политический отчет XV с'езду ВКП(б).
3. Сталин.—Об итогах апрельского пленума ЦК ВКП(б).
4. Сталин.—Об итогах июльского об'единенного пленума ЦК и ЦКК ВКП(б).
5. Молотов.—К текущему моменту.
6. Молотов.—«Лучше признать, чем углублять ошибки». «Правда» от 14/X 1928 г.
7. Ленин.—Марксизм и ревизионизм. Собр. соч., т. XI, ч. I.
8. Ленин.—Заметки публициста. II. Собр. соч., т. XI, ч. 2, стр. 54—57.
9. Ленин.—Разногласия в европейском рабочем движении. Собр. соч. т. XI, ч. 2.
10. Ленин.—Детская болезнь «левизны» в коммунизме. Собр. соч., т. XVII, глава «В борьбе с какими врагами вырос, окреп и закалился большевизм», стр. 124—131.
11. Ленин.—«Фальшивые речи о свободе». Собр. соч., т. XVII.
12. Ленин.—Тактика РКП. Доклад на III конгр. КИ. Собр. соч. т. XVIII, ч. I.
13. Ярославский.—«Об одной опасной теории», см. «Рабочая Москва», № 226, от 28/IX 1928.
14. Резолюция XV с'езда по политотчету ЦК ВКП(б).
15. Резолюция XV с'езда «О работе в деревне».
16. Резолюции апрельского и июльского пленумов ЦК ВКП(б).
17. Коминтерн в борьбе с правыми уклонами. Передовая «Правды» за 18/X 1928 г.
18. К перевыборам парторганов. Передовая «Правды» за 7/X 1928 г.
19. А. И. Рыков.—Речь на ленинградском партантите о Ноябр. пленуме ЦК ВКП(б). Изд. ГИЗ.
20. В. М. Молотов.—Речь на московском партантите о Ноябр. пленуме ЦК ВКП(б). Изд. ГИЗ.
21. Ем. Ярославский.—„У последней черты“. „Большевик“ № 23—24.

## III. ԳԼԽԱՎՈՐ ԳԻԾԸ

Խորհրդային յերկիրը մտել և «ժողովրդական տնտեսության սոցիալիստական անմիջական փոխակերպության շըրջանը՝ նոր տեխնիկայի բազայի վրա»։ Ինդուստրացումը՝ կուսակցության գլխավոր դիճն և շինարարության առաջիկա ամբողջ շրջանում։ Ինդուստրացման հիման վրա պետք է լուծվեն մի շարք դժվարություններ ու հակասություններ՝ մեր զարգացման մեջ։ Սոցիալիստական փոխակերպության պրոցեսն ինքնին կարող իրագործվել միայն այդ դժվարությունների հաղթահարությամբ։

Այդ դժվարություններն ու հակասությունները արտահայտվում են՝ ինչպես անձնական պետքերի համար սպառելի առլրանքների, նույնպես և մետաղի ու շինարարական նյութերի բնագավառում յեղած ապրանքային սովոր յերկույթներում, մեր արդյունաբերության վո՛չ բավարար ուժական բազայում, դյուղատնտեսական հում նյութերի պակասության մեջ, հացահատիկային տնտեսության վո՛չ բավարար զարգացման մեջ, մեր ամբողջ զարգացման ծայրահեղ լարվածության մեջ, ազրարային խոշոր վերաբնակեցման (գյուղական գործազրկության) իրողության մեջ և այլն։ Մի խոսքով, մեր շինարարության մեջ մենք պատա-

հումենք մի շարք նեղ տեղերի, վորոնք դժվարություններ են հարուցում մեր զարգացման գործում:

Դժվարություններն առաջանում են յերկու հիմնական աղբյուրից. 1) յետամսացության այն ժառանգությունից, վոր պրոլետարիատն ստացել է մեր յերկրի անցյալ պատմական զարդացումից (յետամսաց արդյունաբերությունը, հատկապես ծանր արդյունաբերության կախյալ վիճակը առաջադեմ կապիտալիստական յերկրներից՝ մանավանդ արդյունաբերության գծով, գյուղացիական բաժան-բաժան տնտեսությունը՝ իր նախադարյան տեխնիկայով և նվազ ապրանքայնությամբ). 2) այն փաստից, վոր մենք ստիպված ենք այդպիսի համեմատաբար յետամսաց յերկրի պայմաններում ծավալել սոցիալիստական շինարարություն և ժողովրդական տնտեսությանը տալ զարդացման այնպիսի տեմպ, վորպեսզի հասնենք և ապա անցնենք առաջավոր յերկրներից։ Այդ ամենը ի հարկե հնարավոր և միայն ուժերի հսկայական լարման գնով։

«Կապիտալիստական յերկներից մենք տարբերվում ենք նրանով, վոր բարձրացնում ենք մեր ինդուստրիան, ինչպես ծանրը, նույնպես և թեթևը, առանց դրսից յեկած միջոցների (առանց կապիտալիստներից վերցրած փոխառությունների), մեր ներքին սեփական ոեսուրաների հիման վրա, մեր յերկրի բանվոր դասակարգի և գյուղացիության միատեղ ջանքերի հիման վրա։ Սակայն, տեխնիկական մեր յետամսացության պայմաններում զարդացնել ինդուստրիան այնպիսի տեմպով, վորպեսզի չգտնվենք կապիտալիստական յերկրների պոչին, այլ վորպեսզի իրապես հասնենք նրանց և ապա տեխնիկապես անցնենք նրանցից, ինչպես սովորեցնում եր կուսակցությանը Լենինը, —անկարելի յե առանց յերկրի ուժերի ու միջոցների հսկայական

լարման, առանց պրոլետարական շարքերի առկունության և պողպատե կարգավաճության...» (Կենտկոմի դիմումը Մոսկվայի կազմակերպությանը):

Բոլոր գժվարությունները հնարավոր և Սանր յեվ բերեվ հաղթահարել միայն մեր ամբողջ տեխնիարդյունաբերությունը. կայի վերակառուցման հիման վրա: Սուրբն:

ցիալիզմը կարելի յե կառուցել միայն խոր մեքենայական արտադրության հիման վրա:

«...Այդ (սոցիալիստական.—ԽՄԲ.) փոխակերպությունն անիրազործելի յե առանց ինդուստրիայի առավելագույն ծավալման, վորպես հիմք յերկրի ինդուստրացման: Ինդուստրացման լողունգը յեղել ե և մնում ե վորպես սոցիալիստական շինարարության հիմնական լոգունգ: Իսկ ինդուստրիայի զարգացման, վորոշ չափով նաև զյուղատնտեսության զարգացման շարժուն առանցք և հանդիսանում ծանր արդյունաբերությունը, արտադրության միջոցների արտադրությունը»:

«Մենք զիտենք, —ասում ե Լենինը, —վոր Ռուսաստանի փրկությունը հանդիսանում ե վո՛չ միայն զյուղատնտեսության առատ բերքը, —զա զեռ քիչ ե, —վո՛չ միայն թեթև արյունաբերության լավ կացությունը, վոր սպառելի առարկաներ և մատակարարում զյուղացիությանը, —զա՝ ևս զեռ քիչ ե, —մեզ համար անհրաժեշտ ե նաև ծանր ինդուստրիան»:

«Առանց փրկելու ծանր արդյունաբերությունը, առանց նրա վերականգնման մենք չենք կարող նիմնել վո՛չ մի արդյունաբերություն: Իսկ առանց նրան մենք առհաստակ՝ կկորչենք վորպես անկախ ինքնուրույն լեռելիր» (Կենտկոմի դիմումը):

Մեր ամբողջ զարգացման հիմքը և անկյունաքարը — ինդուստրիայի, հատկապես ծանր ինդուստրիայի զորացումն ե:

Միայն այդ գեղքում մենք կարող ենք չդառնալ «զյուղացիական սահմանափակվածթյան պետություն»։ «Գյուղացիության վրա բանվոր դասակարգի ղեկավարության» պահպանումն անհրաժեշտ է ամենից առաջ նրա համար, վորպեսզի իրականացվի մեր յերկրի սոցիալիստական փոխակերպությունը։

«Այդ ուղիի վրա յեղած դժվարությունները — մեր նյութական միջոցների լարվածությունը, ապրանքային սովոր յերեսութները ևայլն—առաջ են բերում վորոշ տատանումներ՝ ինչպես բանվոր դասակարգի վորոշ շերտերում, նույնպես նաև կուսակցության վորոշ ողակներում։ Այդ հողի վրա յերբեմն հանդես են գալիս տրամադրություններ՝ կուսակցության հիմնական կուրսը վերաքննելու ոգտին,— տրամադրություններ՝ թուլացնելու ինդուստրիայի զարգացման տեմպը՝ մասնավորապես (կենտկոմի դիմումը)։

Այդպիսի առաջարկները, վորոնք գնում են լենինյան դիրք դեպի աջ, հիմնաբանվում են հետեյալ կերպով. յերկրում—ապրանքային սով և, պակասում են բանվորների և զյուղացիների կարիքների համար անհրաժեշտ արդյունաբերական ապրանքներ։ Միաժամանակ՝ մենք հսկայական միջոցներ ենք մտցնում հիմնական շինարարության մեջ, հատկապես ծանր արդյունաբերության մեջ։ Կատարում ենք ամենախոշոր մետաղագործական գործարանների շինարարությունը, Դնեպրի ելեկտրակայանի կառուցումը։ Այդ ամենի համար հարկավոր են հարյուրավոր միլիոններ, վորոնց հետեանքը կերիա միայն 4—5 տարուց հետո։ Արդյոք ավելի լավ չի լինի, յեթե ուժեղացնենք մուծանքները թեթև արդյունաբերության մեջ, շուկա հանենք մեծ քանակությամբ արդյունաբերական ապրանքներ՝ անձնական պետ-

բերի համար և վերջ տանը պարանքային սովորնու—Համաձայն  
այդպիսի կարծիքի, ապրանքային սովոր առաջ և գալիս նրա-  
նից, վոր մենք ինդուստրացման համար վերցնում ենք մեր  
ուժերից բարձր տեմպ:

Վերի բերած նկատառութների—դատողությունների սխալը  
կայանում ե, ամենից առաջ, նրանում, վոր ամենասուր և  
վտանգավոր սով գոյություն ունի վոչ թե անձնական  
պետքերի համար անհրաժեշտ ապրանքների ասպարիզում,  
այլ արտադրության միջոցների բնագավառում (մետաղի,  
հատկապես չուգունի, շինարարական նյութերի և այլն):  
Առանց հաղթահարելու այդ ասպարիզում յեղած դժվարու-  
թյունները, մենք չենք կարող ստանալ արտադրության ան-  
հրաժեշտ միջոցներ թեթև արդյունաբերության և դյուզա-  
տնտեսության համար, մենք չենք կարող հաջողությամբ  
իրադորել մեր ժողովրդական ամրող տնտեսության տեխ-  
նիկական վերակառուցումը: Բացի զրանից, վերջին յերեք  
տարվա ընթացքում արդյունաբերության զարգացումը (մա-  
նավանդ՝ շնորհիվ հիմնական խոշոր շինարարության) ապա-  
հովում և լայն սպառողական առարկաների արտադրության  
միալար աճումը: Վերջապես, թեթև արդյունաբերության  
վերաբերմամբ մեծ զեր և խաղում զյուղատնտեսական հում  
նյութերի պակասը: Իսկ զրանց արտադրությունը անկա-  
րելի յե զարգացնել, ինչպես ներքեսում կտեսնենք, առանց  
ծանր ինդուստրիայի զարգացման:

Ծանր ինդուստրիայի զարգացումը հիմք և ստեղծում  
տեխնիկական փոխակերպության իրականացման համար՝  
ժողովրդական տնտեսության բոլոր ասպարեզներում:

Ապրանքային սովի վերացումը և բանվոր դասակարգի  
կուլտուր-նյութական մակարդակի հետագա բարձրացումը  
հնարավոր են առհասարակ ինդուստրիայի զարգացման հիման  
վրա, այդ զարգացմանը խանգարում են ծանր արդյունաբե-

ըության վո՛չ բավարար զարգացումը և գյուղատնտեսական հում նյութերի պակասությունը:

Դժվարությունների հարցը պետք է լուծել վո՛չ միայն «այսորվա» տեսակետից, այլև «վաղվա» որվա տեսակետից, մեր զարգացման ընդհանուր հեռանկարի տեսակետից: Ինդուստրիայի, մասնավորապես ծանր ինդուստրիայի զարգացման տեմպի թուլացումը «այսոր» նշանակում է, վոր մենք փակում ենք մեր ճանապարհը ինդուստրիայի զարգացման համար հետագայում, ժողովրդական տնտեսության, այդ թվում նաև գյուղատնտեսության տեխնիկական փոխակերպության համար: Ահա թե ինչո՞ւ:

«Ծանր ինդուստրիայի զարգացման տեմպի թուլացումը կնշանակեր նոր, ե՛լ ավելի մեծ դժվարությունների կուտակումն մոտիկ ապագայում, եյապես կվատթարացներ բանվոր դասակարգի նյութական ու կուլտուրական մակարդակը և յերկիրը կդներ ծանր կախյալ դրության մեջ համաշխարհային կապիտալից: Պաշտպաննելով ինդուստրիայի ներկա տեմպը, կուսակցությունը ղեկավարվում է, ի միջի այլոց, այն նկատառումով, վոր առհասարակ առանց ինդուստրիայի յեկմանափորապես ծանր ինդուստրիայի սիստեմատիկ ծավալման՝ անհնարին և բանվոր դասակարգի կօլտուր-նյուրական դրույթան բարելավումը» (Կենտկոմի դիմումը):

«... Յերկրի ինդուստրացումը չի վերջանիութեանտեսությունը միայն արդյունաբերության (թեթև բյունը. և ծանր) զարգացմամբ: Ինդուստրացումը նշանակում է նաև գյուղատնտեսության զարգացումն տեխնիկական նոր բաղայի վրա, նշանակում ե՛ անհատական գյուղացիական տնտեսություններին մատակարարել արտադրության նոր մեքենաներ, բարձրացնել նրանց բերքատվությունը, աստիճանաբար

միացնել նրանց հասարակական, կոլեկտիվ տնտեսությունների մեջ, հիմնել և զարգացնել գորեղ խորհրդային տնտեսություններ։

Յեթև չի կարելի գյուղատնտեսությունը զարգացնել առանց արդյունաբերության, առանց գյուղատնտեսական մեքենաների, առանց արակտորների, առանց հողի հանքանյութերով պարարտացման, —համայ արդյունաբերությունն ել չի կարող բավարար չափով զարգանալ առանց ուժեղացնելու գյուղատնտեսության զարգացման տեմպը, վորն արդյունաբերության համար տալիս և հում նյութեր և պարենային մթերքներ։ Մինչդեռ, գյուղատնտեսության զարգացման տեմպը չափազանց յետ և մնում արդյունաբերության աճումից և դժվարությամբ և ծածկում յերկրի հետզհետե աճող կարենները, չկարողանալով ապահովել նրա համար հում նյութերի, պարենավորման և եքսպորտի բազա։ Դա, իհարկե, չի նշանակում, վոր գյուղատնտեսությունը մեզանում դեգրադացիայի յենթարկվում, ընկնում և կամ յետպիմում ե, վորովհետև գյուղատնտեսությունը, ինչպես նաև հացահատիկային տնտեսությունը, տարեցարի անում և զարգանում են մեզանում, բարձրացնելով իրենց բերքատվությունը։ Սակայն, դա նշանակում ե, վոր գյուղատնտեսության անման այժման տեմպը մեղ համար դարձել է միանդամայն անբավարար։

Այդ պատճառով գյուղատնտեսության հետզհետե փոխակերպությունը տեխնիկական նոր բազայի վրա ու գյուղացիության մասսայական արտադրողական կոռպակերացումն և այդպիսով գյուղատնտեսության զարգացման տեմպի ուժեղացումը հանդիսանում են խորհրդային պետության մարտական խնդիրը» (Կենտկոմի դիմումը)։

Հաղթահարել բաղմամիլիոն գյուղացիական մասսայի դարավոր յետամացությունը, այդ հսկայական մասսիվը հետզհետե զնել արտադրողական մասսայական կոռպերացման ուղաների վրա, ստեղծել խոշոր «հացահատիկային ֆաբրիկներ» (խոշոր խորհրդային տնտեսություններ), — այդ բոլոր խնդիրները հսկայական ջանքեր են պահանջում իրենց իրագործման համար, իսկ մեր միջոցները սահմանափակ են, կուլակային տարրերի ընդդիմադրությունն ուժեղ ե, միջին գյուղացիության անշարժությունը մեծ և և նրան կաշկանդող նախապաշարումները բազմաթիվ, Գյուղի սոցիալիստական վերակառուցման պրոցեսսը անխուսափելիորեն կապված և մեծ դժվարությունների հետ.

«Այդ ուղղի վրա կանգնած մեծամեծ դժվարությունները, քնականաբար, տատանումներ են առաջ բերում մեր կուսակցության ավելի պակաս կայուն խավերում։ Այդ տատանումներն անդրադառնում են խորհրդային ու կոլտնտեսությունների դերի թերագնահատման և գյուղի կապիտալիստական տարրերի դեմ արշավը ուժեղացնելու մասին կուսակցության XV համագումարի հանած վորոշումները վերաքննելու ձգտման մեջ» (Կենտկոմի դիմումը):

Այդ հարցում աջ տատանումները գնում են այնպիսի գծով, վորը պահանջում են հրաժարվել այն ամենից, ինչի նպատակն ե՝ հաղթահարել դարավոր հնամոլությունը և վերաշինել գյուղը սոցիալիստական հիմունքներով։ Այստեղ անդրադառնում և և կուլակի ընդդիմադրությունն այդ միջոցառումներին, և գյուղացիության վորոշ խավերի յերկյուղը այն ամենի հանդեպ, վոր նոր և, անսովոր ու անծանոթ և։ Աջ տատանումներն այստեղ գնում են այն գծով, վոր անհատական գյուղացիական տնտեսության վերելքին հակադրվում ե խորհրդային տնտեսությունների կոլեկտի

վացումն ու շինարարությունը ինչո՞ւ հոկայական գումարներ խցկել կոլտնտեսությունների պաշտպանության և խորհրդային նոր տնտեսությունների շինարարության գործի մեջ։ Դեռ հայտնի չե թե այդ բանից ի՞նչ կստացվի և այն և—ուղղակի ոգնել զյուղացիական տնտեսությանը։ Աջ տրամադրություններն արտահայտվում են նաև այն ուղղությամբ, վորպեսզի թուլացնեն արշավը զյուղի կապիտալիստական տարրերի գեմ։ Այդ բոլոր առաջարկները համամիտվում են մի ընդհանուր լոգունգի տակ—«յետ գեղի ԽIV համագումարը»։ Ներկա պայմաններում այդ լոգունգը նշանակում եւ—վերանայել, վերաբննել ԽV համագումարի վորոշումները, հրաժարվել կողեկիտիվացման ու կոռպերացման, խորհրդային նոր տնտեսությունների շինարարության ծավալումից, հրաժարվել զյուղի կապիտալիստական տարրերի գեմ արշավը ուժեղացնելուց։ ԽIV համագումարի առաջ դրված հիմնական խնդիրն եր՝ ամրապնդել միությունը-կապը զյուղացիության միջին խավի հետ և արագացնել զյուղատնտեսության վերելքը, վոր տակավին չեր հասել նախապատերազմյան մակարդակին։ ԽV համագումարը շարունակելով միջին խավի հետ միությունն ամրապնդելու վերաբերմամբ ԽIV համագումարի ընդունած դիմը, դրեց մի շարք նոր խնդիրներ, առանց վորոնց լուծման անկարելի յե զյուղատնտեսության հետագա վերելքը։

Աջ տրամադրություններն իրենց ծայրահեղ ձեռվ արտահայտվում են նաև նրանում, վոր զյուղատնտեսության ներկա դրությունից գուրս դալու յելքը մարդիկ տեսնում են այն բանի մեջ, թե պետք եւ ավելի աղատություն տալ զյուղի արտադրողական բոլոր ուժերի զարգացմանը, այսինքն՝ զյուղի այն տարրերին ես, վորոնք դառնում են կամ արդեն դարձել են շահաղործության տարրեր։ Ողնել չըավոր ու միջակ տնտեսությանը, բայց հրաժարվել ուժեղ կոռպե-

բացումից և կոլեկտիվացումից, բայց չստեղծել գյուղատընտեսության մեջ խոշոր սոցիալիստական ձեռնարկներ, միաժամանակ ուժեղ արշավ չտանել կուլակի դեմ, — ու նշանակում ե, ըստ եյության, գյուղը վոտով-զլխով հանձնել կուլակին, վորովհետև գյուղացիական տնտեսությանը ցույց տրված ողնությունը՝ առանց այդ տնտեսության կոռպերացման՝ չի կարող փոխել գյուղում իշխող այն գրությունը՝ յերբ կուլակային տնտեսությունները, վորպես ամենախոշոր տնտեսություններ, ավելի զորեղ են, քան միջակ տնտեսությունները։ Առանց հիմնելու գյուղում հենակային կետեր, կոլլեկտիվաբերի ու խորհրդային խոշոր տնտեսությունների ձևով, առանց կոռպերացման՝ չի կարելի կտրել կուլակի ուժի զլխավոր արմատները, չի կարելի վերջ տալ կապետականությունի բողբոջների յերևան դալուն՝ մանր բուրժուական տարերքի հողի վրա։

Ա.ջ տրամադրություններն աշխատում են հիմնավորել նրանով, իբրև թե գյուղատնտեսությունը գնում ե ղեղի անկում (գեղագացիա)։ Տագնապային այդ գրությունը բնավ չի համապատասխանում իրերի փաստացի կացությանը։ Զնայելով աշնանացանի զգալի մասի փշանալուն, հացահատիկային ցանքսերի ընդհանուր բերքը ավելի բարձր ե անցյալ տարվա բերքից (101,1 տոկոս, այսինքն 1,1 տոկոսով ավելի), իսկ գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը հավելում ե տալիս 4,7 տոկոս։

Դյուղատնտեսությունը, այդ թվում նաև հացահատիկային տնտեսությունը, անում ե, բայց ավելի դանդաղ, քան անհրաժեշտ ե դա, համեմատած յերկրի սոցիալիստական վերակառուցման ընդհանուր պրոցեսի հետ։ Մեզանում նկատելի յե վո՞չ թե գյուղատնտեսության անկումն, այլ անման վո՞չ բավարար տեմպ։ Ամբողջ խնդիրն այդ ե։ Դրանով հենց՝ կուսակցությունը պատասխան ե տալիս հացամթե-

բումների փորձից հանած տագնապային բոլոր հետեւություններին, յերբ մարդիկ փորձում եյին զնել զյուղատնտեսության անկման (դեղրագոյայի) հարցը:

«Այդ տատանումները յերեան են հանում չհասկանալու կարողություն այն բանի, վոր առանց զյուղատնտեսության փոխակերպության՝ տեխնիկայի նոր բազայի վրա, առանց կոռպերացման ու կոլեկտիվացման—անհնարին և հզորապես բարձրացնել զյուղի արտադրողական ուժերը, ազատել զյուղատնտեսության միջոնավոր մասսան չքավորությունից և ապահովել տնտեսության սոցիալիստական տարրերի հաղթանակը նրա կապիտալիստական տարրերի վրա» (Կենտկոմի դիմումը):

Գյուղատնտեսության զարգացման տեմպն ուժեղացնելու հարցը զնելով նրա տեխնիկական փոխակերպության ու կոլեկտիվացման հիման վրա, կուսակցությունը ընդ սմինշեցում ե, թե այդ աճումը հնարավոր և վո՛չ թե ի հաշիվ ինդուստրացման տեմպի թուլացման, այլ ինդուստրիայի արագ զարգացման հիման վրա, մասնավանդ նրա այն ճյուղերի, վորոնք արտադրում են արտադրության միջոցներ:

Դրանով կուսակցությունը պատասխան և տալիս այն ամենքին, ովքեր առաջարկում են զարգացնել զյուղատնտեսությունն ի հաշիվ արդյունաբերության, մասնավորապես ծանր արդյունաբերության զարգացման տեմպի նվազեցման: Գյուղատնտեսության վերելքը հնարավոր չե առանց տեխնիկական խոշոր վերակառուցման, այսինքն՝ առանց տրամադրելու զյուղատնտեսական ձեռնարկներին զյուղատնտեսական մեքենաներ, տրակտորներ, հողի պարարտացման համար հանքանյութեր ևայլն: Գյուղատնտեսության զարգացումն, իր հերթին, շատ մեծ չափերով կախված է առհասարակ ինդուստրիայի, մասնավորապես՝ ծանր ինդուս-

տրիայի զարգացումից։ Ահա թե ինչո՞ւ ծանր ինդուստրիան հանդիսանում և հիմնական «սմիջկային» արդյունաբերություն, վորն ոգնում և ամրապնդել բանվոր դասակարգի միությունը գյուղական չքավորության ու միջին խավերի հետ։

Եելակետ ընդունելով այս բոլորը, կուսակցությունը մերժում և «վերականգնող» գների գաղափարը, վորի եյությունը հանդում և այն պահանջին, թե պետք և հավասարեցնել արդյունաբերական և գյուղատնտեսական գները՝ վերջիններս բարձրացնելու միջոցով։

«Մկրատը» խուփ տալ անմիջապես, բայց վո՞չ արդյունաբերական գների իջեցումով՝ ինքնարժեքի իջեցման համեմատ, այլ անհավաղ ու խիստ բարձրացնելով գյուղատնտեսական ապրանքների գները,—դա նշանակում և զրկել արդյունաբերությունն իր կուտակումներից, վորովհետև այդ դեպքում անհրաժեշտ կլինի բարձր գին տալ հում նյութերին և մեկն-մեկ բարձրացնել աշխատավարձ։ Դա նշանակում և՝ տապալիլ ինդուստրացման գործը, որել ապրանքային սովոր, հետեւարար և անձնատուր լինել կապիտալիստական յերկրներին։

Կուսակցությունն այդ հարցում հակահարված և տալիս թե՛ աջ և թե «ձախ» տատանումներին։ Կուսակցությունը հակահարված և տվել և կտա տրոցկիզմին, վորն առաջարկում եր զարգացնել ինդուստրիան՝ գյուղատնտեսությունից միջոցները զորեղ էերպով փոխադրելով ինդուստրիայի մեջ։ Դա կնշանակեր՝ վոչնչացնել հում նյութերի և պարենավորման բազան, սահմանափակել արդյունաբերական ապրանքների շուկան, հրաժարվել գյուղի սոցիալիստական վերակառուցումից և խզել կապը գյուղացիության միջին խավի հետ։ Ճաշախ գերինդուստրացման յետեւում թագնըված եր, ըստ եյության, սոցիալիստական շինարարության ամբողջ քաղաքականության տապալումը։

Կուսակցությունը հարկահարված ե տվել և կտա նաև  
աջ թեքումներին, ոպորտունիստական տրամադրություննե-  
րին, վորոնք հանգում են այն բանին, վորափեղի զյուղա-  
տընտեսության վերելքի պատրվակի տակ հնարավոր լինի  
հրաժարվել ինդուստրացման քաղաքականությունից, ծանր  
արդյունաբերության զարգացումից, իսկ զյուղատնտեսու-  
թյան մեջ զնալ ամենաթույլ դիմադրության գծով—հրա-  
ժարվել տեխնիկական վերակառուցումից՝ կոռպերացման և  
կոլլեկտիվացման հիման վրա, ամբողջ գործը տանել անհա-  
տական անտեսությանն ոգնություն հասցնելու ուղղությամբ  
միայն, չհասկանալով այն բանը, վոր արտադրողական ու-  
ժերի իսկական ու հղոր զարգացումը հնարավոր չե անհա-  
տական մանր բուրժուական հիմունքի վրա։ Կուսակցու-  
թյունը հակահարված ե տալիս ոպորտունիստական թեքում-  
ներին, վորոնք աշխատում են հրաժարվել կապիտալիստա-  
կան տարրերի գեմ արշավն ուժեղացնելուց։

«... Արդյունաբերության և զյուղատըն-  
Դժվարություննե-  
տեսության ասպարիզում վերակառուցման  
րի հայրահարու-  
վը յեկ դասակար-  
գային պայխարը.  
բարզանում են՝ աշխարհում առաջին պրոլե-  
տարական պետության գեմ իմարիալիստական պե-  
տությունների մզած պայքարի սրումով։ Այդ բանն  
արտահայտվում է միջազգային բուրժուազիայի արած  
նոր փորձերի մեջ, վորոնց նպատակն է խանգարել մեր  
շինարարությունը՝ անտեսական շրջափակման (բլոկա-  
դա) և ԽՍՀՄ վրա հարձակվելու միջոցով, կաշուել  
արդյունաբերության հրամանատարական կազմը (Շախ-  
տիի գործը) եայլն։

Այս բոլոր դժվարությունները, ինչպես նաև սոցիա-  
լիստական շինարարության ծավալումն ինքնին՝ նրա

ներկա տեմպով, զարկ են տալիս յերկրի կապիտալիստական տարրերի (նեպման, կուլակ, բուրժուական ինտելիգենցիա) ակտիվությանը ու պայքարի աճմանը՝ ընդդեմ պրոլետարական պետության քաղաքականության իր վերջնական հաշվով գեպի դասակարգերի վոչնչացումը տանող սոցիալիստական շինարարության այժմյան ետապում տեղի ունի դասակարգային պայքարի սրումն, վոր առանձնապես խիստ և արտահայտվում գյուղում։ Կուսակցությունն իր քաղաքականությամբ յելնում և, և չի կարող չելնել, յերկրի մեջ դասակարգային պայքարի սրման հաշվառքից, վորն առանձնապես արտահայտվեց անցյալ տարվա հացամթերումների ժամանակ պրոլետարական պետության տնտեսական պլանի դեմ կուլակային տարրերի կատարած լուրջ յելույթի մեջ։ Մինչդեռ, մանր բուրժուական տարերքի (վոր տակավին խոշոր ուժ և կազմում մեր յերկրում, չնայելով հասարակական սեկտորի աճմանը) անհուսափելի ճնշումը արտահայտվեց այն բանում, վոր կուսակցական կազմակերպությունների առանձին ողակները կորցրին դասակարգային պարզ մոտեցումը հարցին։ Դեռ փետրվար 13-ի թվակիր իր նամակում կենտկոմն ստիպված եր նշել, թե—

Մեր կուսակցական և այլ կազմակերպություններում վերջերս առաջ յեկան կուսակցության համար ոտար տարրեր, վորոնք դասակարգեր չեն տեսնում գյուղում, չեն հասկանում դասակարգային քաղաքականության հիմունքները և փորձում են աշխատանքը տանել այնպես, վորպեսզի վոչ վոքի չնեղացնեն գյուղում, խաղաղ-հաշտ կյանքով ապրեն կուլակի հետ և առհասարակ պահեն իրենց ժողովրդականությունը գյուղի «բոլոր խավերում»։

Դասակարգային պայքարի սրման պայմաններում դասակարգերի գերի այդպիսի թերագնահատությունը մեր յերկրում առանձնապիս վտանգավոր է, վորովհետև նա զինաթափ և անում կուսակցությունը և թմրեցնում է բանվոր դասակարգի զգոնությունը։ Դասակարգային պայքարի մոմենտների այդ թերագնահատությունը հանդիսանում է բացահայտ ոպսրառունիտական թերերում և մանր բուրժուական տենդենցների համար ներս սողոսկելու անցք։

Մի այլ թերերում, վոր ծնունդ և առնում սոցիալիստական շինարարության գործին չհավատալուց և դժվարությունների հանդեպ անձնատվությունից, — հանդիսանում և զյուղացիության միջին խավերի հետ բանվոր դասակարգի միության արժեքի թերագնահատությունը (տրոցկիզմ)։

Կուսակցությունը յերկու թերերումների գեմ և մղել և և մղում և վճռական պայքար։ Ինչպես հացամթերումների մասին դրած փետրվարյան իր նամակում, նույնպիս և ապրիլյան և հուլիսյան իր պլենումներում կենտկոմը շեշտում է, թե անհրաժեշտ և վճռական պայքար մղել լիրկու Ֆրանսում, յերկու թերերումների գեմ ես։

«Կուսակցությունը իր բաղաքականության մեջ պետք է յելակետ ընդունի վճռական պայքարը՝ ինչպես այն տարրերի գեմ, վորոնք բուրժուական տենդենցների արտահայտություն են մեր յերկրում և վորոնում են անտես առնել XV համագումարի վորոշումը — «ել ավելի զարդացնել արշավը կուլակության վրա», — նույնպիս և այն տարրերի գեմ, վորոնք վորոնում են արտակարգ ու ժամանակավոր միջոցառումներին տալ մշշտական կամ յերկարատե կուրսի ընույթ և այդպի-

սով վտանգել բանվորների ու գյուղացիության հիմնական մասսաների միության գործը» (տես Համ.ԿԿ(բ) կենտկոմի հուլիսյան բանաձեռ):

Վորովհետև միայն բանվոր դասակարգի դեկավարությամբ՝ բանվորների և գյուղացիների միությունն ամբապնդելու հիման վրա՝ հնարավոր և գլուխ բերել հաղթական սոցիալիստական շինարարությունը:

Այդ պատճառով, կուսակցությունն, ինչպես վճռականապես պայքարում եր տրոցկիզմի դեմ և կպայքարի նրա փշրանքների դեմ, պետք և պայքարի և պիտի պայքարի բացահայտ ոպորտունիստական աջ թեքման դեմ, հետևաբար, նաև դեպի աջ թեքումը դրսեորած հաշտվողական վերաբերմունքի դեմ» (Կենտրոնական կոմիտեյի դիմումը):

Աջ թեքման վերաբերմամբ հաշտվողական Հաւսվողականությունը հանդուրժողականությունն ապացույց ե, թյուն։ ամենից առաջ, այն բանի, վոր չեն հասկանում այդ տատանումների ամրող լրջությունն ու ֆլասակարությունը ներկա շրջանում։ Հաշտվողականությունը առաջանում և դասակարգային ուժերի միջազգային և ներքին փոխհարաբերությունը (վորով բնորոշվում ե ներկաշրջանը) չհասկանալուց, մեր յերկրում աջ վտանգի արմատները (եյությունը) չհասկանալուց, վտանգ՝ վոր սպառնում և վերականգնել կապիտալիզմը։ Հաշտվողականությունն առաջ և գալիս՝ կամ մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման գործում կուսակցության հիմնական գիծը չհասկանալուց, կամ մի շարք քաղաքական հիմնական հարցերում դրսեորած տատանումներից։ Առանց հաղթահարելու հաշտվողականությունը՝ չի՛ կարելի վճռական պայքար մղել ոպորտունիստական թեքման դեմ, վորը միդապատում և հաշտվողականությունը։ իսկ առանց այդ ամենի չի կարելի

հաջողությամբ հաղթահարեց մեր ճանապարհին կանգած դժվարությունները:

Կուսակցության զիսավոր զիծը յեվ ԽՍՀՄ պատասխանակուր թյունը.

ԽՍՀ Միության ինդուստրացման վերաբերմամբ կուսակցության գլխավոր կուսակցության հակագրելով աջ տարրերի ոպորտունիստական ձգտումներին, չպետք է մոռանալ նաև այն կապի մասին, վոր գոյություն ունի ԽՍՀ Միության ինդուստրացման, գյուղի սոցիալիստական վերակառուցման ու ժողովրդական տընտեսության կապիտալիստական տարրերի դեմ արշավը ծավալելու վերաբերմամբ լենինյան պլանի և ԽՍՀ Միության պաշտպանունակության հարցի միջև Ամեն անդամ, յերբ Վաղգիմիր Իլիչ Լենինը առիթ եր ունենում արտահայտվելու ԽՍՀ Միության պաշտպանունակության և սրա բարձրացման պայմանների մասին, նա միշտ ել այդ հարցը կապում եր մեր յերկրի սոցիալիստական փոխակերպության հեռանկարների ու տեմպի հարցի հետ:

«Յերկիրը չի կարելի դարձնել պաշտպանունակ՝ առանց այն ժողովրդի գերազույն հերոսության, վորը համարձակ և վճռականորեն իրակացնում ե տնտեսական մեծ փոխակերպությունը» (Վ. Ի. Լենին, Յերկերի ժողով, Տ. XVI, Վ. I, ՇԹ. 212),

Իսկ ինդուստրացման վերաբերմամբ կուսակցության վերցրած ու զարգացրած և այժմ ունեցած տեմպի նշանակությունը՝ ԽՍՀՄ պաշտպանունակության և նոր պատերազմների վտանգի հարցում՝ կայանում ե հենց նրանում, վոր —

1) ԽՍՀ Միության ինդուստրացումը բարձրացնում է պաշտպանունակությունը, ապահովում է անհրաժեշտ ֆոնդերի ստեղծումը՝ պատերազմի դեմքում, ամրացնում է տնտեսական տեսակետից թիկունքը, հեշտացնում է բանակի մատակարարման գործը և բարձրացնում է նրա տեխնիկա-

կան կարողությունը։ Անհամեմատ լավացնում և տրանսպորտային հնարավորությունները, զորքի արագ տեղափոխության հնարավորությունը և կարգի յերբում նրանց ու թիկունքի միջև անհրաժեշտ կապը եայլն և այլն։

«Մենք վերջացրինք, — գրում ե այդ առթիվ Վ. Ի.

Լենինը, — պատերազմների մի շրջանը։ Մենք պետք ե պատրաստվենք յերկրորդ շրջանի համար. թե յե՛րբ ե սկսվելու այն, մենք չդիտենք, և պետք ե այնպես անել, զոր յերբ գա այդ շրջանը, — մենք կարողանանք բարձրունքի վրա գտնվել» (Վ. Ի. Լենին, Յերկերի ժողով, Տ. XVII, ս. 416)։

2) Գյուղի սոցիալիստական վերակառուցումը, գյուղատքներության կելիկտիվացումը և խորհրդային տնտեսությունների շինարարությունը ապահովում են պրոլետարական պետքացնում անհրաժեշտ հում ռեսուրսներ ստանալու գործում, մեղմացնում են հնարավոր պատերազմի պայմաններում՝ աշխատող ձեռքերի գործից կտրվելու իրողությունը, ամրացնում, ուժեղացնում են հեղափոխական հերոսականության սոցիալական աղբյուրը, նպաստում են բանվորների և գյուղացիների տնտեսական ու սազմա-քաղաքական կապիմիության ամրապնդմանը, եայլն եայլն։

«Գյուղացիական տնտեսությունը չպետք ե հին ձեռվշարունակվի. յեթե մենք կարողացանք պատերազմների առաջին շրջանից զուրս գալ, — պատերազմների յերկրորդ շրջանից հեշտությամբ զուրս գալ չենք կարող։ Այդ պատճառով հարկավոր ե այդ կողմի վրա դարձնել հատուկ ուշադրություն» (Վ. Ի. Լենին)։

3) ԽՍՀ Միության ժողովրդական տնտեսության մեջ կապիտալիստական տարրերի դեմ արշավի հետագա ծավալումը նպաստում ե մեր թիկունքի ամրացմանը՝ հնարավոր պատերազմի դեպքում, նվազեցնում ե հակախորհրդային

յելույթների վտանգը յերկրի ներսում, ջլատում—վոչնչացնում և կապիտալիստական տարրերի հնարավոր հականեղափոխական գործնեյությունը, սոցիալապես ու քաղաքականապես նրանց մեկուսացնում և գյուղացիության հիմնական մասսաներից և դրանով հենց վերացնում և արտաքինու ներքին հականեղափոխության միանալու շնարավորությունը, վորովհետեւ կտրում և հականեղափոխության արմատները, վոչնչացնում և նրա ակունքները:

Այդ պատճառով ահա, ի միջի այլոց, կուսակցության աջ ասարերի ոպորտունիստական ձգտումները՝ վերաբննելու ԽՍՀ Միության ինդուստրացման, գյուղի սոցիալիստական վերակառուցման և մեր յերկրի կապիտալիստական տարրերի գեմ այսուհետեւ արշավը ծավալելու վերաբերմամբ վերցրած կուրսը՝ թուլացնում են մեր Միության պաշտպանունակությունը, արգելը ևն հանդիսանում նրա հետազա զորացմանը, պրոլետարական դիկտատուրայի ուղղմական, տեխնիկական ու տնտեսական զորացմանը, թուլացնում են նրա դիրքերը ուղղմական վտանգի հանդեպ:

Այդպիսով, մեր Միության պաշտպանունակությունն ամրապնդելու անհրաժեշտությունը հրամայողաբար պահանջում և վճռականություն և հաստատակամություն՝ իրագործելու և իրականացնելու կուսակցության լենինյան գլխավոր կուրսը, և անհաշտ լինելու՝ ոպորտունիստական աջ տարրերի կողմից այդ կուրսը վերաբննելու ամեն տեսակ փորձերի գեմ մըդղ վող պայքարում:

Մեր դժվարությունների հիմնական բյուների առանձ առանձնահատկությունը կայանում և նրան ձեռնատկությունը. նում, վոր այդ դժվարությունները—

«... կանգ-առման կամ անկման դժվարություններ չեն: Լինում են դժվարություններ տնտեսության անկման կամ նրա կանգ-առման դեպքերում, ըստ վորում,

մարդիկ աշխատում են տնտեսության կանգ-առումը դարձնել ավելի պակաս ցավոտ կամ ավելի չխորացնել նրա անկումը։ Մեր դժվարությունները վո՞չ մի առնչություն չունեն այդ տեսակ դժվարությունների հետ։ Մեր դժվարությունների բնորոշ գիծն այն է, վոր դրանք վերելի դժվարություններ են, զորացման դժվարություններ են։ Յերբ մեզանում խոսք ե լինում դժվարությունների մասին, խոսքը սովորաբար վերաբերում է այն բանին, թե քանի՞ տոկոսով բարձրացնել արդյունաբերությունը, քանի՞ տոկոսով ավելացնել-ընդառակել ցանքսերի տարածությունը, քանի՞ փութով բարձրացնել բերքատվությունը, ևայլն ևայլն։ Հենց այն պատճառով, վոր մեր դժվարությունները վերելքի դժվարություններ են և վո՞չ թե անկման կամ կանգառման, ուստի, դրանք չպետք ե կուսակցության համար հանդիսանան առանձնապես վտանգավոր։ Սակայն, դժվարությունները, ինչ ել լինի, դժվարություններ են։ Յեզ վորովհետև դժվարությունները հաղթահարելու համար անհրաժեշտ ե լարել բոլոր ուժերը, — անհրաժեշտ են հաստատամտություն և տոկունություն, իսկ այդ ամեն մարդ չունի (գուցե այն պատճառով, վոր մեզանում նկատելի յե հոգնածություն և ուժասպառություն, կամ գուցե այն պատճառով, վոր մարդիկ գերադասում են՝ ապրել ավելի հանգիստ, առանց պայքարի ու հուզումների), ուստի, հենց այստեղ ել սկսվում են տատանումներն ու յերերումները, շրջադարձը դեպի ամենաթույլ դիմադրության գիծը, խոսակցությունները ինդուստրիայի զարգացման տեմպը թուլացնելու մասին, կոլտնտեսությունների ու խորհանտեսությունների և առհասարակ այն ամենի մասին, ինչ անցնում է առորյա աշխատանքի սովորական ու

Խաղաղ պայմանների սահմաններից։ Սակայն, մենք չենք կարող առաջ շարժվել՝ նախազես չհաղթահարելով մեր դիմաց յեղած դժվարությունները։ Իսկ այդ դժվարությունները հաղթահարելու համար պետք է, ամենից առաջ, հաղթահարել աջ վտանգը, պետք է, ամենից առաջ, հաղթահարել աջ թեքումը, վոր արգելը և հանդիսանում դժվարությունների դեմ մղվող պայքարի գործին և փորձում և ջլատել մեր կուսակցության կամքը՝ դժվարությունները հաղթահարելու պայքարում» (Ստալին, — 1928 թ. հոկտեմբեր 19-ին ՄԿ պլենումում արտասահմած ճառը)։

Կուսակցությունը դժվարությունները հաղթահարում և՝ ինդուստրացման, ծանր ինդուստրիայի զարգացման, գյուղատնտեսության բարձրացման (սրա տեխնիկապես վերակառուցման, կոստերացման և կոլեկտիվացման միջոցով) իր վարած քաղաքականության հիման վրա։ Այդ պատճառով կուսակցության հետեւյալ լոգունդները իրենց ուժի մեջ են մնում նաև այսուհետեւ։

«Ինդուստրիալի զարգացման այժմյան տեմպն անդաման պահել։

Դյուղի մասսայական կոռպերացումն յեվ սոցիալիստական փոխակերպություն։

Գյուղացիության միջին խավերի նետ բանվորների յեվ գյուղական չխպորության միություն՝ բանվոր դաստկարգի դեկավար դերն, ապահովելու համար։

Բանվոր դաստկարգի ու գյուղի աշխատավոր մասսաների նյութական յեվ կուլտուրական մակարդակի բարձրացումն։» (Կենտկոմի դիմումը)։

## ԳՐԱԿՈՒՈՒԹՅՈՒՆ

1. Обращение ЦК ВКП(б) „Но всем членам московской организации“ „Правда“ от 19/Х 1928 г.
2. На два фронта. Передовая „Правды“ от 15/IX 1928 г.
3. К новому хозяйственному году. Передовая „Правды“ от 30/IX.
4. О товароснабжении деревни. Передовая „Правды“ от 2/X.
5. Промышленность перед новым хозяйственным годом. Передовая „Правды“ от 13/IX 1928 г.
6. Снабжение хлебом. Передовая „Правды“ от 21/IX 1928 г.
7. Сельхозналог и наша классовая линия в деревне. Передовая „Правды“ от 25/IX 1928 г.
8. Бухарин.—„Заметки экономиста“. „Правда“ от 30/IX 1928 г.
9. Яковлев.—К вопросу о хозяйственных задачах предстоящего года. „Правда“ № 252.
10. Крумин.—Борьба за рационализацию и задачи партии. „Правда“ от 3/XI 1928 г.
11. За генеральную линию партии. „Пропагандист“ № 23—24 за 1928 г. стр. 78.
12. Гришин.—Под знаменем великих задач. „Правда“ от 3/XI 1928.
13. Леонтьев.—Хозяйственные задачи и проблема равновесия. „Правда“ от 4/XI 1928 г.
14. О потребностях и возможностях. Передовая „Торгово-промышленной газеты“ за 16/X 1928 г.
15. Письмо т. Фрумкина в редакцию газеты „Торгово-пром. Газета“ от 21/X 1928 г.
16. Ответ редакции на письмо т. Фрумкина. „Торг.-пром. газета“ от 21/X 1928 г.
17. А. И. Рыков.—Речь на ленинградском партактиве о Ноябр. пленуме ЦК ВКП(б). Изд. ГИЗ.
18. В. М. Молотов.—Речь на московском партактиве о Ноябр. пленуме ЦК ВКП(б). Изд. ГИЗ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## I. ՅԵՐԿՈՒ ՖՐՈՆՏԻ ՎՐԱ

	հջ
1. ԼԵՆԻՆԸ ԹԵՔՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ . . . . .	5
Մեր վո՞ր թենամիների դեմ մղած պայքարում զորացակ, ամրապրդվեց ու կոփվեց բոյլսեվիզմը . . . . .	6
Դժվարությունները նեղափոխական շարժման մեջ յեզ թեքումները . . . . .	9
Պայքար յերկու ֆրոնտի վրա յեզ հաւաքողականությունը	12
2. ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՀԻՄՔԸ ՄԱՆՐ - ԲՈՒՐՃՈՒԱԿԱՆ ՏԱՐԵՐՔՆ Ե	16
Լենինը կապիտալիզմի վերականգման հնարավորու- թյան մասին . . . . .	17
«Ով—ում?»	20
Գրոլետարիատի դիկտատուրան յեզ բանվոր դասա- կարգի ու գյուղացիության միությունը . . . . .	21
Ինչպիսի միություն ենք մենք պատճանում	23
Տատանուան ուժը . . . . .	26
Զիջումների թեորիան	27
Յերկու ֆրոնտ . . . . .	29
3. ԻՆՉՈ՞Ր ՊԵՏՔ Ե ԱՅԺՄ ՄՐՎԻ ԱԶ ՎՏԱՆԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԸ	32
Կոմինեերնի VI կոնգրեսը բանվորական շարժման հեռանկարների յեզ ազ վտանգի մասին . . . . .	32

	Եջ
Դասակարգերի փոխհարաբերությունը . . . . .	41
Բանվոր դասակարգը . . . . .	42
Գյուղացիությունը . . . . .	44
Կապիտալիստական տարրերը . . . . .	47
Քաղաքային մանր բուրժուազիան . . . . .	49
Նախկին կապիտալիստները յեկ մասնագետները . . . . .	49
Բյուրոկրատիզմ . . . . .	50
Վ."որ թերումն և ավելի վտանգավոր . . . . .	52
Տնտեսական դժվարությունները յեկ աջ վտանգը . . . . .	54
<b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>55</b>
<b>II. ԳԼԽԱՎՈՐ ԳԻԾԸ</b> . . . . .	<b>56</b>
Ծանր յեկ թերեվ արդյունաբերությունը . . . . .	58
Գյուղատնտեսությունը . . . . .	61
Դժվարությունների հաղրահարումը յեկ դասակարգային պայմարը . . . . .	68
Հաւաքողականություն . . . . .	71
Կուսակցության գլխավոր գիծը յեկ ԽՍՀՄ պատասխունակությունը . . . . .	72
Մեր դժվարությունների առանձնահատկությունը . . . . .	74
<b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b> . . . . .	<b>77</b>

---

ԽՈՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՅՈՒՍՔԵԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇԵՍՈՒՐԻ ԿԱՆ ՆԱՅԵՎ ՀԵՏԵՎՑՄ ԳՐՔԵՐԸ

Աղդային հարց,—ՍՍԱԼԻՆ .	1 թ.	60 կ.
Դյուզացիսկական հարց,—ՍՍԱԼԻՆ .		50 »
Սոցիալիզմի ուղին,—Ն. ԲԱԽԻԿԱՐԻՆ .	1 թ.	25 »
Լենինի պատգամները ժող. լուս. մասին .		20 »
Լենինի պատգամները յերիտասարդության .		15 »
Համ. Կոմիտասի(բ) պատմությունը,—ՎՈԼՈՍԵՎԻՉ .	1 թ.	50 »
Բոյցեկիների կուռակցությունը 1917 թվին,—ՅԱՐԱՍԼԱՂՅՈՒԿԻՑ		85 »
Հոկտեմբեր .		10 »
Ռազմի ուղեր .		15 »
Ինչ ավել Հոկտեմբերը բանվորներին .		20 »
1905 թ. մեր կ-ին բանվ.-դյուլ. հեղափոխութ.,—ՖԵԼԵՐԾՎԱԿԻՑ		70 »
Պայքարի և շինտրարության տարի,—ՆԱՎԱԿՈՎԱԿԻՑ		70 »
Ինչուս աշխատածացնել գյուղաբորհությունները .		30 »
Պատերազմ չինք ուղարկ, բայց գիմազրելու պատրաստ ենք .		20 »
Ինչով և ուժեղ կարմիր բանակը .		15 »
Պատմական մատերիալիզմի այլուրներ .		80 »
Բազարական բառարան (656 էջ) .	2 թ.	—
Ապարագիցին հսաննքները Համ. Կի(բ) ներսում .		20 »
Համ. Կի(բ) XV համագումարի վորագումները և ժամանակակից գելաբրիկատական դրականությունը,—ԼԱԶՅԱՆԻ		»
Քաղաքագիտության զասագիրք կոմյերիտական. համար պր.   .		25 »
»                   »                   »                   »                   » II .		40 »
»                   »                   »                   *                   » III .		50 »
Աստծու և աստվածապաշտության մասին (զանազան հավատ- ների ձագումբ), նկարազարդ .		45 »
		30 »


ՏՊԱԳՐՎԱՆԻՄ ԵՆ

ԱՅՆԻՆ.—ՀԱՂՎԱՃՆԵՐ 1914—18 թ. թ. պատերազմի մասին (15 մամուլ)

» «Մի քայլ առաջ, յերկու քայլ յետ» (17 մամուլ)

» «Ի՞նչ անել» (15 մամուլ)

Պահանջեցեմ մեր լրիվ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ,  
Վոր ուղարկվուն ե ձեր



ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0045325

23 ЧПЧ.

[274]

A 2  
8457

---

Агитпроп МК ВКП (б)  
Борьба с правой опасностью  
и примиренчеством

---

На армянском языке